ՋՈՆ ՄԱՐՇԱԼ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ
ԾՆՈՂԻ ՁԵՌՆԱՐԿ

ՏՆՕՐԵՆԻ ՈՒՂԵՐՁԸ

Ջոն Մարշալ դպրոցի հարգելի ընտանիքներ,

Մեր անձնակազմի անունից ցանկանում եմ ողջունել ձեզ Մարշալ տարրական դպրոցում, ուր աշակերտները շրջապատված են հոգատարությամբ և խրախուսվում են հասնելու իրենց հնարավորությունների առավելագույնին: Ուսման մեջ մենք կենտրոնանում ենք ընթերցանության ընկալման վրա, և մեր ուսուցիչները նվիրված մասնագետներ են, ովքեր հանձնառու են մեր աշակերտներին տրամադրել հետաքրքիր և ոգեվորող ուսումնական փորձառություն, ինչը կնախապատրաստի նրանց ապագային:

Իմ նպատակն է աջակցել ուսմանը և ուսումնառությանը՝ այցելելով դասարաններ և տեսնելով, թե ինչպես են մեր աշակերտները զարգացնում իրենց հմտությունները դասարանում խիստ քննարկումների, համագործակցության, քննադատական մտածողության, հաղորդակցության և ստեղծագործական գործունեության միջոցով: 2020թ. օգոստոսին մեր դպրոցը ստացել է Panda Express, Leader In Me դրամաշնորհը: Leader In Me-ն փաստերի վրա հիմնված, դպրոցի բարելավման համապարփակ մոդել է, որը կենտրոնանում է առաջնորդության, մշակույթի և ուսման վրա: Նպատակն է ուսուցանել, առաջ քաշել, ուժեղացնել և կատարելագործել բարձր արդյունավետություն ունեցող մարդկանց 7 սովորույթները: 7 սովորույթների օգտագործումը դրականորեն կազդի աշակերտների ուսումնական, անձնական և մասնագիտական զարգացման վրա:

Մեր դպրոցի Առաքելությունը. *Ջոն Մարշալ տարրական դպրոցը մշակութապես բազմազան և հոգատար համայնք է՝ նվիրված և հոգատար անձնակազմով, որը նվիրված է դպրոցին՝ նախապատրաստելով բոլոր աշակերտներին իրենց ապագայի համար:*

Մեր դպրոցի տեսլականը. Ջոն Մարշալ տարրական դպրոցի անձնակազմը և ընտանիքները համագործակցում են՝ ստեղծելու դպրոցական ներառական մշակույթ, որտեղ բոլոր աշակերտներն իրենց ապահով են զգում և խրախուսվում են զարգանալ ուսումնական, սոցիալական և զգացմունքային առումով՝ իրենց ներուժի առավելագույնը ձեռք բերելու համար: Աշակերտները կմասնակցեն չափանիշների վրա հիմնված խստապահանջ դասերի և գրավիչ գործունեությունների մեջ (ներառյալ փոքր խմբերում ուսուցումը և նպատակային միջամտությունը դասարանում), քանի որ նրանք ըմբռնումն ի ցույց են դնում բովանդակության բոլոր ոլորտներում գրավորի միջոցով: Աշակերտները կզարգացնեն իրենց ուսումնական և անձնական նպատակներ, քանզի նրանք մասնակցում են առաջնորդելու հնարավորություններին, ինչը նրանց կպատրաստի քոլեջին, կարիերային և կյանքին:

Ահա մի քանի բան, որ կարող եք անել՝ ձեր երեխայի ուսումնական կարիքներին աջակցելու համար.

1. Խնդրում ենք որոշ ժամանակ տրամադրեք՝ ծանոթանալու այս ձեռնարկին: Տեղեկություններն առկա են նաև *www.gusd.net/marshall* կայքում:
2. Աշխատեք, որ ձեր երեխան ամեն օր դպրոց գա ժամանակին և պատրաստ՝ մասնակցելու ու սովորելու: Ամեն րոպեն կարևոր է:
3. Ամեն ջանք գործադրեք ներգրավվելու ձեր երեխայի ուսումնական օրվա մեջ: Պարբերաբար շփվեք ձեր երեխայի ուսուցչի հետ և հաճախեք դպրոցի ժողովներին և միջոցառումներին: Ժամանակ գտեք կամավորական լինելու երեխայի դասարանում:
4. Ամեն օր կարդացեք ձեր երեխայի համար, կամ ձեր երեխան թող կարդա ձեզ համար: Ձեր երեխային հարցեր տվեք իր կարդացածի մասին:

Միասնաբար մենք ստեղծում ենք ամուր համագործակցություն՝ ապահովելու Մարշալ դպրոցի բոլոր աշակերտների առաջընթացն իրենց ուսումնական ջանքերում, որպեսզի դառնան վճռական մտածողներ, խնդիրներ լուծողներ, արդյունավետ հաղորդակիցներ և այս բազմազան ու շարունակաբար փոփոխվող աշխարհի բացառիկ անդամներ:

Հարգանքով,
Տկն. Ջուանիթա Շահիջանեան

Տնօրեն

ՄԱՐՇԱԼ ԴՊՐՈՑԻ ՎԱԳՐԻԿՆԵՐԻ ԵՐԳԸ

“Yankee Doodle Dandy” երգի մեղեդիով

I’m a happy Marshall Tiger,
A Marshall Tiger, hear me ROAR!
I Respect Others, Act Responsibly,
Treat other people kindly...
I keep my hands and feet to myself,
Listen to hear what people say.

I make good choices, use my words,
Walk nicely down the hallway.
Let’s have a tigerrific day...
Let’s have a tigerrrific day!!

ՕՐՎԱ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Խաղահրապարակը երեխաների համար բացվում է առ. ժ. 7:30-ից:
Աշակերտները պետք է իրենց դասարանի շարքում լինեն առավոտյան ժ. 8:10-ին:
Բոլոր աշակերտները պետք է ժամանեն Chevy Chase-ի դապբասի մոտ: Չի թույլատրվում մտնել դպրոցի գրասենյակից:
Առավոտյան ժ. 08:10-ից հետո ժամանող աշակերտները պետք է <u>ուղեկցողի հետ</u> գնան դպրոցի գրասենյակ:
Առավոտյան ժ. 8:15-ից հետո ժամանած աշակերտները կստանան ուշացածի/շատ ուշացածի թերթիկ (կախված գալու ժամից):

ԶԱՆԳԻ ԺԱՄԵՐԸ

7:30	Խաղահրապարակը բացվում է և վերահսկվում
8:10	Դարպասները փակվում են
8:15	TK – 5-րդ դասարանների դասերը սկսվում են

ԸՆԴՄԻՋՈՒՄ

9:30–9:47	TK, K, 1-ին դաս.
10:00–10:17	2 – 3-րդ դաս.
10:30–10:47	4 – 5-րդ դաս.

ՃԱՇ

11:10 –11:50	TK, K, SAI K/1-ին դաս.
11:35 –12:15	1-ին, 2-րդ, SAI 2/3-րդ դաս.
11:55 – 12:35	3-րդ, 4-րդ դաս.
12:15 – 12:55	5-րդ դաս.

ԴԱՍԵՐԻ ԱՎԱՐՏԸ

1:01	TK
1:11	K/Մանկապարտեզ
2:07	1-ին, 2-րդ, 3-րդ դաս.
2:27	4-րդ, 5-րդ դաս.

ԿԱՐՃ ՕՐԵՐԻՆ ԴԱՍԵՐԻ ԱՎԱՐՏԸ

11:40	TK
11:50	K/Մանկապարտեզ
12:10	1-ին, 2-րդ, 3-րդ դաս.
12:30	4-րդ, 5-րդ դաս.

ԴՊՐՈՑԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԺԱՄԵՐԸ

Առ. ժ. 7:30 – 4:00-ը
Երկուշաբթիից - ուրբաթ
Հեռ.՝ (818) 242-6834 Ֆաքս (818) 242-1761

www.gusd.net/marshall

ՍՆՆԴԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆԱԽԱՃԱՇ

Աշակերտները կարող են Ջ. Մարշալ դպրոցում օրը սկսել նախաճաշով: Նրանք կարող են անվճար նախաճաշ ուտել դասերից առաջ ժ.7:30-8:00-ը **ԿԱՄ** ընդմիջման ժամանակ: Եթե աշակերտը ցանկանում է նախաճաշել դասերից առաջ **ԵՎ նաև** ընդմիջման ժամանակ, ապա 2-րդ նախաճաշը կարժենա $1,25, որը վճարվում է կանխիկ գումարով կամ աշակերտի հաշվից:

ՃԱՇ

Աշակերտները կարող են իրենց ճաշը բերել դպրոց կամ անվճար ճաշ ստանալ դպրոցի ճաշարանից: Յուրաքանչյուր աշակերտին օրական տրամադրվում է երկու անվճար սնունդ (նախաճաշ ԿԱՄ ուտեստ և ճաշ):

Լրացուցիչ/2-րդ սնունդը և ապրանքները, ինչպիսիք են շշով ջուրը, չիպսերը և այլն, պետք է գնվեն կանխիկ գումարով կամ խնամակալի կողմից աշակերտի հաշվին մուտքագրված գումարով:

Տե՛ս ճաշացանկը և գները GUSD-ի հավելվածում.
http://mealapp.gusd.net
Եթե աշակերտները ճաշը բերում են տնից, խնդրում ենք հիշել, որ իրենց հետ բերեն դպրոց կամ նրանք կարող են անվճար ճաշ ստանալ սրճարանից: Գրասենյակը չի ընդհատի դասը՝ բերված ճաշի պատճառով:

ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԵՏԸ ՏԱՆԵԼՈՒ ՃԱՇԸ ՄԱՏՈՒՑՎՈՒՄ Է ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿԱՐՃ ՕՐԵՐԻՆ

ՈՒՏԵՍՏ (SNACK)

Ուտեստը կամընտիր է: Դուք կարող եք ուղարկել մեկ բաժին, սննդարար ուտեստ ընդմիջմանն ուտելու համար: Որպես ուտեստ ցանակալի են գազարը, նեխուրի ձողիկները, գրանոլայի սալիկները, միրգը, չամիչը կամ այլ սննդարար մթերքներ:

Մենք խրախուսում ենք ընտանիքներին աջակցել Կրթաշրջանի Աշակերտների բարօրության խորհրդի քաղաքակա-նության 5030-ին և սննդի կրթության ծրագրին՝ հաշվի առնելով սննդի որակը՝ ուտեստներ և խմիչքներ տրամադրելիս:
Տնից բերված սնունդը դպրոցում հնարավոր չէ սառեցնել կամ տաքացնել:
Սնունդն ուրիշների հետ կիսել չի թույլատրվում:
Մեծապես խորհուրդ է տրվում **ջուր բերել:** Աշակերտները պետք է նստեն ուտեստն ուտելիս/խմելիս և պետք է պատշաճ կերպով թափեն աղբը:

ՍՆՆԴԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սննդի ծառայությունների մասին լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք այցելեք հետևյալ կայքը. https://www.gusd.net/Page/800

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջին հիմնական օգնություն – Դպրոցը առաջին բուժօգնություն է ցուցաբերում միայն դպրոցում առաջացած վնասվածքների դեպքում: Ծնողին կանչում են միայն այն դեպքում, եթե անհապաղ առաջին օգնությունից բացի խնամք է պահանջվում:

Ուսուցչին տրամադրվում են ծանուցումներ աշակերտների հատուկ առողջական խնդիրների վերաբերյալ, որոնք ազդում են ուսման վրա:

Առողջության ստուգումներն անց են կացվում.

Հասակ և քաշ – K, 2-րդ, 5-րդ դասարաններ
Տեսողություն\Լսողություն – K, 2-րդ, 5-րդ դաս.
Ատամներ – K, 1-ին դասարաններ
Հասունացման ծրագիր – 5-րդ դաս.

Ծնողներին ծանուցվում է վարակիչ հիվանդությունների վերահսկման, դպրոցում դեղեր ընդունելու, ֆիզիկական արատների հետ կապված խնդիրների և համայնքային ռեսուրսներ ուղղորդելու մասին:

Դեղորայքի ընդունում – Կրթաշրջանային ձևաթուղթը **ՊԵՏՔ Է** ստորագրված լինի բժշկի կողմից:

ԴԵՂԵՐԻ ԵՎ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եթե երեխան դասերի ժամերին դեղորայքի կարիք ունի, ապա նախքան այդ դեղորայքը տալը գրասենյակում առկա հատուկ ձևաթուղթը պետք է լրացվի և ստորագրվի բժշկի և ծնողների կողմից:

Աշակերտները չեն կարող իրենց հետ բերել կամ պահել առանց դեղատոմսի դեղեր (հազի կաթիլներ, ասպիրին, վիտամիններ, լոզենիներ, մրսածության, արևից պաշտպանող միջոցներ և այլն)

Նշանակված և/կամ առանց դեղատոմսի դեղամիջոցները պետք է բերվեն դպրոցի գրասենյակ՝ համապատասխանորեն լրացված ձևաթղթով հանդերձ:

100°-ից բարձր ջերմություն ունեցող աշակերտները պետք է տանը մնան 24 ժամ:

Հենակներով կամ գիպսով աշակերտները պետք է ունենան բժշկի թույլտվություն, որը նշում է, որ նրանց սովորեցրել են աստիճաններով բարձրանալ և իջնել, <u>ինչպես նաև</u> տնօրենի թույլտվություն՝ դպրոց հաճախելու համար:

<u>Կապի տվյալներ.</u> Շատ կարևոր է, որ մենք ունենանք աշակերտների թարմացված կոնտակտային տվյալները: Խնդրում ենք.

1. Այցելեք մեր Parent Connection հարթակը parent.gusd.net-ում
2. Մուտքագրեք ձեր PIN-ը և գաղտնաբառը
3. Վերևի աջ անկյունում սեղմեք “Annual Student Information Update”
4. Թարմացրեք ձեր աշակերտի և ծնողի/խնամակալի տեղեկությունները յուրաքանչյուր բաժնի համար: *(Նշում. յուրաքանչյուր ծնող/խնամակալ պետք է թարմացնի իր տվյալները՝ օգտագործելով իր անհատական PIN-ը/գաղտնաբառը)*

Խնդրում ենք տեղեկացնել բուժքրոջը, եթե ձեր երեխայի առողջական կարիքները կամ խնամքը փոփոխվեն: Պատվաստման քարտերը պետք է ներկայացվեն ամեն փոփոխությունից հետո:

ԱՆՎՏԱՆԳ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Մեր աշակերտների անվտանգությունը թիմային աշխատանք է: Մենք ունենք Գլենդելի անցումի քաղաքային հսկիչ Broadway և Chevy Chase խաչմերուկում՝ աշակերտների ապահովության համար և երթևեկելի գոտի, որը հսկում է դպրոցի անվտանգության պարեկի անձնակազմը դասերից առաջ և հետո՝ դպրոց անվտանգ մուտքի և ելքի համար: Որպեսզի մեր գործընթացը հաջող աշխատի, **ԲՈԼՈՐ** վարորդները պետք է հետևեն երթևեկության գոտու ընթացակարգերին: Մենք **ՁԵՐ օգնությա**ն կարիքն ունենք երթևեկության գոտում, երբ իջեցնում և վերցնում եք ձեր աշակերտին:

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ՀԻՇԵԼ.

Հանգիստ, քաղաքավարի եղեք այլ վարորդների նկատմամբ և ձեր երեխաների համար միշտ օրինակելի վարքագիծ ցուցաբերեք: Հետևեք երթևեկության գոտում աշխատող դպրոցի անձնակազմի հրահանգներին: Նրանք այնտեղ են ձեր երեխայի անվտանգության համար: Բոլոր ունակ աշակերտները պետք է իրենք բացեն իրենց մեքենայի դուռը:

Երթևեկության գոտու մուտքն առաջին նարնջագույն կոնի մոտ է, իսկ իջեցնելը/վերցնելը միայն կանաչ կոնի հատվածում: **Մուտք գործելու համար այլ մեքենաների դիմացը մի կտրեք:**

Երթևեկության գոտու երկայնքով անվտանգությունն ապահովելու համար խնդրում ենք չկայանե՛լ կամ կանգ առնել ավելի երկար, քան անհրաժեշտ է՝ ձեր երեխային իջեցնելու կամ վերցնելու համար: Մեքենաները չպետք է երբևէ արգելափակեն երթևեկությունը:
Խաղահրապարակը բացվում է առ. ժ.7:30-ին: Վաղ ժամանեք՝ խցանումներից և ուշացումից խուսափելու համար: Երբ զանգը հնչում է ժ. 8:10-ին, դարպասներն անմիջապես փակվում են:

Առավոտյան ոտքով եկողները պտտվող դարպասից մտնում են խաղահրապարակ: Մեքենայով եկածները ներս են մտնում Chevy Chase փողոցի դարպասից: Առանց բացառության:

Եթե ձեր երեխան այնտեղ չէ, երբ դուք գալիս եք նրան վերցնելու, դուք պետք է շրջանցում անեք և նորից մտնեք երթևեկության գոտի: **Դուք չե՛ք կարող կայանել և սպասել:**
Կեսօրին, եթե դուք մեքենայով եք ձեր երեխային վերցնում, պետք է վերցնեք վարորդների, այլ ոչ թե քայլողների դարպասից:

Հետևեք մեքենա վարելու օրենքներին՝ կապված կրկնակի կայանման և շրջադարձերի հետ. կրկնակի կայանում մի՛ արեք, մի՛ կանգառեք կամ շրջադարձ կատարեք փողոցի մեջտեղում: Դա անօրինական է և վտանգավոր երեխաների ԵՎ չափահասների համար:

Փողոցն անցեք միայն հետիոտնի անցումներով և նույնը սովորեցրեք ձեր երեխային: Խնդրում եմ նրանց մի՛ կանչեք փողոցը մեջտեղից անցնելու: Անհրաժեշտության դեպքում փողոցն անցեք ձեր երեխայի մոտ և ուղեկցեք նրան դեպի մեքենան:

Մի արգելափակեք Հատուկ կրթության ավտոբուսի տարածքը Wilson փողոցում, այլապես կտուգանվեք:

Աշակերտներին չի կարելի իջեցնել կամ վերցնել մուտքի դռան մոտ, նույնիսկ անձրևոտ օրերին: Նրանք պետք է մտնեն և դուրս գան իրենց սովորական դարպասներից:

Ամենակարևորը. խնդրում ենք առաջարկություններին և ընթացակարգերին ծանոթացնել բոլոր նրանց, ովքեր վերցնում են ձեր երեխային, այդ թվում դասերից հետո դասապատրաստողներին և երեխաների խնամակալներին:

Վտանգավոր վարելուն ականատես ծնողները կարող են հայտնել GPD (Ոստիկանություն) հեռ.՝ 818-548-3131: Նրանց անհրաժեշտ կլինի այդ մեքենայի համարը և նկարագրությունը: Յուրաքանչյուրի անվտանգությունը մեր առաջնահերթությունն է: **Խնդրում ենք, թույլ մի՛ տվեք, որ վթարը փոխի ձեր վարելաոճը: Ապահով ձևով վարեք ա՛յժմ:**


WILSON AVENUE
SPECIAL ED. BUS PARKING
Grass Area
Gate #1
Green Cones
Shelter Bench Area
Gate #2 Revolving
Orange Cones
Parking Lot
Stairs
Bungalow 4
Bungalow 3
Bungalow 2
Bungalow 1
CHEVY CHASE DR.
Gate #3 Walking exit Revolving
Stairs
Marshall Front Entrance
44
BROADWAY

ԱՆՎՏԱՆԳ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Ձեր երեխաներին դպրոց բերեք առավոտյան ժ. 7:30- 8:00-ը: Խուսափե՛ք խցանումներից:

Իջեցնելու կամ վերցնելու հատվածում՝ Chevy Chase փողոցի վրա, **ԿԱՆԳԱՌՆ ԱՐԳԵԼՎԱԾ Է** առ. ժ.7:30-9:00-ը և կեսօրից հետո ժ.2:00-3:30:

Մինչև ժ. 8:10-ն աշակերտները չեն կարող մտնել դպրոցի առջևի դռներից: Մենք ունենք երթևեկության զոտի, ձեր երեխայի անվտանգության համար:

Ժ. 8:10-ից հետո եկած աշակերտները պետք է գրասենյակ գան (ուղեկցի հետ միասին): Նրանք ուշացման/շատ ուշացման մասին թերթիկ կստանան՝ կախված գալու ժամից: Շատ ուշացումն ազդում է հաճախումների տվյալների վրա: Հաճախումները գրանցվում են ամեն օր:

Կրթաշրջանը ունի «Ո՛չ աննպատակության» քաղաքականություն բոլոր դպրոցների համար: Երբ աշակերտին վերցնում եք դարպասի մոտ, ապա պետք է գնաք: Աշակերտները չեն կարող խաղալ առջևի մարգագետնում: Երեխաները չեն կարող խաղալ դպրոցի առջևի խոտերի վրա և չեն կարող դուրս գալուց հետո առանց չափահասի մտնել դպրոց :

Դասերն ավարտվելուց հետո բոլոր ոտքով տուն գնացողները պետք է դուրս գան քայլողների դարպասից: Եթե ավտոմեքենայով եք եկել ձեր երեխային վերցնելու, ապա պետք է վերցնեք **վարորդների** դարպասի մոտից: Դուք չեք կարող կայանել ձեր ավտոմեքենան և սպասել, որ աշակերտը դուրս գա քայլողների դարպասից: Ձեզ և ձեր երեխային կուղարկեն վարորդների դարպասի մոտ:

Այն աշակերտները, ովքեր ունեն ավագ քույր/եղբայր, կսպասեն դարպասից ներս, մինչև իրենց եղբայրը/քույրը միանա իրենց:

Միայն 5-րդ դասարանի աշակերտները կարող են քայլելով տուն գնալ, եթե ծնողի ձեռագրով գրություն ներկայացնեն գրասենյակին: Ոտքով տուն գնացող աշակերտները պետք է դպրոցի դռնից դուրս գալուն պես գնան ուղիղ տուն:

Հիշեցրեք ձեր երեխաներին, որ ԲՈԼՈՐ անծանոթները հնարավոր է վտանգավոր լինեն՝ երիտասարդ կամ ծեր, տղամարդ կամ կին: Զգույշ եղեք, երբ ավտոմեքենայից մարդիկ ձեզնից ուղղություն են հարցնում: Միշտ հեռվից պատասխանեք: Երբեք մի՛ մոտեցեք մեքենային: Եթե ինչ-որ մեկը բռնում է աշակերտին, օգնության կանչեք ցանկացած ձևով և պատահածի մասին անմիջապես զեկուցեք չափահասի:

ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ ՀԵՐԹԻՆ՝ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է ՄՇՏԱՊԵՍ ԱՊԱՀՈՎ

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Չնայած յուրաքանչյուր երեխա և կարգապահական իրավիճակ տարբեր են, մենք փորձում ենք հետևողական, քայլ առ քայլ ընթացակարգին հետևել: Մեր ուսուցիչները սերտ հաղորդակցություն են պահպանում այն երեխաների ծնողների հետ, ովքեր դժվարությամբ են հարմարվում դպրոցին, խաղում այլ երեխաների հետ կամ հետևում են դպրոցի կանոններին: Ծնողների հետ այս սերտ հաղորդակցությունը հաճախ ժամանակատար է ուսուցիչների և մեր վարչակազմի համար. այնուամենայնիվ, մենք կարծում ենք, որ դա կարևոր է յուրաքանչյուր երեխայի բարեկեցության, ինչպես նաև մեր դպրոցի անվտանգության և ապահովության համար: Ե՛վ ուսուցիչները, և՛ վարչակազմը անմիջական պատասխանատվություն են կրում Մարշալ դպրոցում կարգապահության համար:

Մենք միշտ երախտապարտ ենք այն հրաշալի աջակցության համար, որ ստանում ենք մեր դպրոցի ծնողներից: Մենք ցանկանում ենք, որ ծնողներն իմանան մեր հետևյալ կարգապահության ծրագիրը, որպեսզի կարողանան օգնել մեզ՝ ուղղորդելու իրենց երեխաներին կարգապահ լինելու դասարանում և խաղահրապարակում.

Դրական վարքագծի միջամտության աջակցության (PBIS) ժողովներ են անցկացվում տնօրենի կողմից ուսումնական տարվա սկզբին, ուր բացատրվում է աշակերտներին, թե որոնք են իրենց վարքագծի վերաբերյալ մեր ակնկալիքները: Դասարանային կանոնները փակցված են յուրաքանչյուր դասասենյակում և դպրոցի տարածքում:

Ուսուցիչը ծնողներին և աշակերտներին բացատրում է դասարանի և դպրոցի կանոնները Դպրոցի վերամուտի երեկոյի (Back-to-School Night) ընթացքում:

Ուսուցիչն անհրաժեշտության դեպքում դասարանի հետ վերանայում է դպրոցի կանոնները:

Երբ երեխաները վատ են պահում իրենց կամ խախտում են դպրոցի կանոններն ընդմիջման կամ ճաշի ժամանակ, նրանց տրվում է «կապույտ թերթիկ»: Բակի հերթապահ օգնականը քննարկում է յուրաքանչյուր «կապույտ թերթիկի» դեպք առանձին աշակերտ(ներ)ի հետ:

Համաձայն կրթաշրջանային քաղաքականության AR5144-ի՝ ուսուցիչը կարող է 20 րոպե երկար պահել TK – 3-րդ դասարանի աշակերտին, 4-5-րդ դասարանների աշակերտին՝ 30 րոպե՝ դասերից հետո:

Մի քանի կապույտ թերթիկ ստացած աշակերտի ծնողը ծանուցվում է գրությամբ կամ հեռախոսազանգով, և աշակերտին կարող են նշանակել շաբաթօրյա դպրոց:

Դասարանի ուսուցչին կարգապահության հետ կապված խնդիրներում օգնում են այլ ուսուցիչներ, դպրոցի հոգեբանը կամ մասնագետ ուսուցիչը:

Ծնողական ժողով է անցկացվում: Հնարավոր է, որ մշակվի վարքագծի պայմանագիր:

Կարգապահության խնդիրը տնօրենի կամ փոխտնօրենի ուշադրությանն է ներկայացվում այլընտրանքների համար, որոնք կարող են ներառել. ծնողական ժողով, մնալ դասերից հետո, ուղղորդում կամ մասնագիտական խորհրդատվություն, ժամանակավոր հեռացում, շաբաթօրյա դպրոց, կենտրոնական գրասենյակի միջամտություն, դպրոցից տեղափոխում և այլն:

,Մենք նաև հավատում ենք դրական վարքագծի գնահատմանը, աշակերտներին պարգևելով «Հրաշալի վագրեր» թերթիկով, դպրոցի կանոնները հետևողականորեն պահպանելու համար:

ԴՊՐՈՑԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՎԱՐՎԵԼԱՁԵՎԻ ՆՈՐՄԵՐԸ

Ջոն Մարշալ դպրոցի աշակերտները ROAR մշակույթի օրինակ են ծառայում. հարգել ուրիշներին, գործել պատասխանատու կերպով

John Marshall Elementary School

High Five to the Culture of ROAR

Schoolwide Behavior Expectations

Locations	*I will...* **Respect Others,** *when*	*I will...* **Act Kindly,** *when*	*I will show...* **Responsibility First,** *when*
Classroom	• I raise my hand and wait my turn • I walk in the classroom • I attend daily and participate actively	• I Listen to others speak • I cooperate and help others • I use materials appropriately	• I follow classroom rules • I do my best to complete my work • I use appropriate voice level
Playground	• I keep my hands and feet to myself • I follow rules of each game • I share equipment and include others in play	• I take turns • I am a good sport • I use kind words	• I freeze when the bell rings and I walk to line • I clean up and pick up my belongings • I am truthful and make good choices
Cafeteria	• I keep my hands and feet to myself • I use my inside voice • I raise my hand when I need something	• I say "please" and "thank you" • I wait patiently to be excused • I help clean up	• I throw trash away • I clean up after myself • I take only what I will eat
Auditorium & Amphitheater	• I use whole body listening • I am considerate • I keep my hands and feet to myself	• I keep my feet down at all times • I applaud appropriately • I participate politely	• I enter and exit slowly and quietly • I stay in line • I keep my hands and feet to myself
Restroom	• I give others privacy • I wait patiently • I flush and clean up after myself	• I am quiet • I keep my hands and feet to myself • I let an adult know if a student needs help	• I wash my hands • I return to my classroom promptly • I put used paper towels into the waste basket
Hallway & Courtyard	• I walk quietly • I keep my hands and feet to myself • I stay in line	• I hold the doors open for others • I keep personal belongings tidy • I walk in an orderly manner	• I hold equipment with both hands • I drink water during recess • I use the restroom during recess
Library, Computer Lab, Chromebooks	• I use my inside voice • I have clean hands • I use whole body listening	• I return materials to the right place • I follow rules • I am patient and wait for my turn	• I return books on time • I recharge Chromebooks • I use my time wisely

ԲԱՐՕՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ուսումնական խորհուրդը և Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանը (GUSD) միտված են իրականացնելու Բարօրության քաղաքականություն, որը նպաստում է սննդդային, ֆիզիկական և հոգեկան առողջությանը: Մենք հավատում ենք, որ դրական, անվտանգ և առողջությանը խթանող ուսումնական միջավայրն անհրաժեշտ է, որպեսզի աշակերտները հնարավորություն ունենան անձնական, ուսումնական զարգացման և սոցիալական հաջողությունների հասնելու: Ուսումնական խորհուրդը և Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանն ընդունում են, որ ուսուցիչների, աշխատակազմի և համայնքի ներգրավվածությունը, մասնակցությունը և Բարօրության քաղաքականության իրագործումն անհրաժեշտ են համապարփակ և համագործակցային բարեկեցության համար: Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել GUSD-ի AR5030 կայքը:

ԴՊՐՈՑԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

- Աշակերտները չեն կարող ունենալ, վաճառել կամ այլ կերպ տրամադրել հրազեն, դանակ, պայթուցիկ կամ այլ վտանգավոր առարկա: Չի թույլատրվում նաև այնպիսի խաղալիքներ կամ կրկնօրինակներ, որոնք նման են կամ կարող են սխալմամբ ընկալվել և/կամ օգտագործվել որպես զենք: Նման առարկաներ ունենալը դպրոցից հեռացնելու հիմք է հանդիսանում:
- Աշակերտները դպրոցում երբևէ չեն կարող վաճառել իրեր կամ գումար փոխանակել այլ աշակերտների հետ:
- Անվտանգության և առողջության նկատառումներից ելնելով, ձեր երեխային իջեցնելիս կամ վերցնելիս, խնդրում ենք ձեր շանը միշտ կապած պահել: Դպրոցում երբեք չեն թույլատրվում ընտանի կենդանիներ: Խնդրում ենք ողջախոհություն ցուցաբերել, երբ ձեր կապված շանը հետ սպասում եք մայթին, քանի որ շատ երեխաներ ալերգիա ունեն կամ վախենում են, և հնարավոր է շունը վնասի կամ կծի:
- Չեն թույլատրվում հայհոյանք, վիրավորական արտահայտություններ, ռասիստական կամ սեռական արտահայտություններ:
- Երեխաները չպետք է խոսեն անծանոթների կամ այլ մարդկանց հետ, ովքեր կարող են մոտենալ դպրոցին կամ ցանկապատին:
- Դպրոց կարելի է բերել միայն թույլատրված դպրոցական պարագաներ (ոչ խաղալիքների, ֆիդջեթ պտուտակներ, խորանարդիկ կամ նմանատիպ սարքեր, գնդակներ, էլեկտրոնիկա, փոխանակելի քարտեր և այլն):
- Ետևից վազելը, բռնոցին և կռիվ խաղերն արգելված են ցանկացած վայրում, ցանկացած ժամանակ:
- Աշակերտները միջանցքներում պետք է միշտ անցագիր ունենան:
- Աշակերտները պետք է հարգեն և ենթարկվեն <u>դպրոցի ողջ անձնակազմին</u>՝ ուսուցիչներին, մասնագետներին, դպրոցի ղեկավարներին, գրասենյակի աշխատակիցներին, ճաշարանի աշխատողներին և հավակարարներին:
- Աշակերտները ՉԵՆ կարող հեռանալ դպրոցից առանց թույլտվության:
- Մեր դպրոցի քաղաքականությունն է՝ թույլ չտալ որևէ մեկին դասասենյակ բացել դասերից հետո, որպեսզի աշակերտը վերցնի մոռացված իր կամ առաջադրանք: Պատասխանատվությունը խթանելու համար մենք խրախուսում ենք աշակերտներին չմոռանալ անհրաժեշտ իրերը տուն տանել:

ԿԱՆՈՆՆԵՐԸ Ջ. ՄԱՐՇԱԼ ԴՊՐՈՑՈՒՄ 4 ՊԱՏՃԱՌ ՈՒՆԵՆ.

1. Ապահովել Ջ. Մարշալ դպրոցի աշակերտների և անձնակազմի անվտանգությունը:
2. Տրամադրել բոլորի համար արդարացի ուղեցույցներ:
3. Օգնել աշակերտներին սովորել բարության և ուրիշների հանդեպ ուշադրության կարևորությունը:
4. Ցուցաբերել հետևողականություն այս կանոնները դպրոցում ամբողջ անձնակազմի կողմից կիրառելիս:

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ ՈՒՂՂՈՐԴԵԼ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՆԵԼ ՃԻՇՏ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼ

Մեր նպատակն է Մարշալ դպրոցում օգնել աշակերտներին սովորել, թե ինչպես խնդիրները և հակամարտությունները լուծել հանգիստ և խաղաղ ճանապարհով: Երբ միջադեպ է տեղի ունենում, աշակերտները պետք է տեղեկացնեն իրենց ուսուցչին կամ չափահաս աշխատակցի: Աշակերտը կարող է լրացնել Խնդրի մասին զեկույցը, բացատրելով միջադեպը և առաջարկելով խնդրի լուծման այլընտրանքային տարբերակներ: Եթե հարկն է, ուսուցիչը տնօրենին կհղի միջադեպը/աշակերտին: Այդ ժամանակ տնօրենը կխոսի միջադեպի մասնակից բոլոր աշակերտների հետ և ըստ անհրաժեշտության, կորոշի ինչ հետևանքներ կիրառել:

Ջոն Մարշալ դպրոցի կարգապահության քաղաքականությունը ռազմավարությունների համակցություն է, որն օգնում է աշակերտներին՝ հասկանալ կանոնները սահմանելու պատճառները և իրենց խնդիրները լուծելու ուղիները:

Աշակերտները տեղեկացվում են իրենց ուսուցիչների և վարչակազմի կողմից դասարանի/դպրոցի կանոնների, ինչպես նաև իրենց վարքագծի համար պարգևների և հետևանքների մասին:
Մարշալ դպրոցում մենք ձգտում ենք կենտրոնանալ դրականի վրա:

Մարշալը *Leader In Me* դպրոց է և մենք հնարավորություններ ենք փնտրում՝ աջակցելու մեր աշակերտների առաջնորդական կարողություններին: Մենք պարգևատրում ենք մեր աշակերտներին «Հրաշալի վագրեր» և «Առաջնորդության մրցանակներ» պարգևներով մեր ամենամյա ժողովներում:

ԴՊՐՈՑԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄ – ԴՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

- Դպրոցի կանոնները խախտող աշակերտները կստանան մեկ նախազգուշացում: Եթե աշակերտը շարունակի խախտել մասնակի կանոնը, նա կստանա Վարքի խախտման ծանուցում.
- Խախտման մասին ծանուցումը կուղարկվի տուն, որ ծնողը ստորագրի և հաջորդ օրը պետք է վերադարձնի ուսուցչին:
- Աշակերտը վատ վարքագծի համար հետևանք կկրի:
- Ծնողը և վարչական ղեկավարը կներգրավվեն ըստ անհրաժեշտության:

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԵՌԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աշակերտները և ծնողները պետք է իմանան, որ ինչպես նախատեսված է Կալիֆոռնիայի Կրթության օրենսգրքի 48900-ով, աշակերտները կարող են ժամանակավորապես հեռացվել դպրոցից մի շարք կանոնների խախտման համար, որոնք տեղի են ունեցել դպրոցում, դպրոց գնալիս կամ դպրոցից վերադառնալիս, այդ թվում.

- Մեկ այլ անձի ֆիզիկական վնասվածք պատճառելը, պատճառելու փորձը կամ սպառնալիքը
- Ցանկացած հրազենի, դանակի, պայթուցիկի, այլ վտանգավոր առարկայի, հրազենի կրկնօրինակի, խաղալիք ատրճանակի կամ խաղալիք դանակի առկայությունը
- Ցանկացած վերահսկվող նյութ կամ թմրամիջոցների հետ կապված սարքավորումներ, ալկոհոլ, ծխախոտ, թմրանյութեր, սիգարներ ունենալը կամ վաճառքը
- Վերահսկվող նյութի կամ ալկոհոլի ազդեցության տակ լինելը
- Գողությունը կամ շորթումը
- Սեռական ոտնձգությունը
- Դպրոցի կամ անձնական սեփականությանը, ներառյալ էլեկտրոնային ֆայլերին և տվյալների բազաներին վնաս պատճառելը կամ վնասելու փորձը
- Դպրոցի գործունեության խանգարումը կամ անձնակազմի անդամների հանդեպ միտումնավոր արհամարհանքը
- Դպրոցի գողացված գույքը կամ գողացված անձնական սեփականությունը գիտակցաբար ստանալը
- Դպրոցի գույքի կամ անձնական սեփականության գողություն կամ գողության փորձ
- Անպարկեշտ արարքը, սովորական հայհոյանքը կամ գռեհկությունը

Մենք բոլոր աշակերտներից ակնկալում ենք լավ վարքագիծ դրսևորել, խոհեմ լինել միմյանց և մեր դպրոցի բոլոր չափահասների նկատմամբ:

GUSD-ի ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲՌՆԱՐԱՐՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Խորհրդի 5131քաղաքականությունն ամբողջությամբ կարելի է գտնել «Ռեսուրսներ ծնողների համար» բաժնում՝ www.gusd.net

ԲՌՆԱՐԱՐՔԻ ԿԱՆԽՈՒՄ

Հնարավորության սահմաններում Կրթաշրջանի և դպրոցի ռազմավարությունները պետք է կենտրոնանան բռնարարքների կանխարգելման վրա՝ սահմանելով աշակերտների վարքագծի հստակ կանոններ և ռազմավարություններ՝ դրական, համագործակցային դպրոցական մթնոլորտ ստեղծելու համար: Աշակերտները պետք է տեղեկացված լինեն աշակերտի ձեռնարկների և այլ համապատասխան միջոցներով բռնարարքներին վերաբերող Կրթաշրջանի և դպրոցի կանոններին, միջադեպերի կամ սպառնալիքների մասին զեկուցելու առկա մեխանիզմներին և բռնարարքի հեղինակների համար նախատեսված հետևանքներին: Կրթաշրջանը կարող է աշակերտներին տրամադրել ուսուցում դասարանում կամ այլ կրթական միջավայրում, որը խթանում է արդյունավետ հաղորդակցության և կոնֆլիկտների լուծման սոցիալական հմտություններ, բնավորության/արժեքների ուսուցում, մշակութային և անհատական տարբերությունների հարգանք, ինքնագիտակցության զարգացում, ճկունություն, ինքնավստահություն և պատշաճ վարքագիծ համացանցում: Դպրոցի անձնակազմը պետք է ստանա համապատասխան վերապատրաստում, ներառյալ տեղեկացվածություն ոտնձգության/ահաբեկող վարքագծի վաղ նախազգուշացնող նշանների, արդյունավետ կանխարգելման և միջամտության ռազմավարությունների վերաբերյալ: Հիմնվելով դպրոցում բռնարարության դեպքերի գնահատման վրա՝ Գերատեսուչը կամ պաշտոնակատարը կարող է ուժեղացնել վերահսկողությունը և անվտանգությունը այնտեղ, որտեղ ամենաշատն են տեղի ունենում բռնարարքները, ինչպես օր.՝ դասասենյակները, խաղահրապարակները, միջանցքները, զուգարանները, ճաշարանները:

ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆ

Աշակերտներին խրախուսվում է տեղեկացնել դպրոցի անձնակազմին, երբ նրանք ենթարկվում են բռնության կամ կասկածում են, որ մեկ այլ աշակերտ է զոհ դառնում: Բացի այդ, Գերատեսուչը կամ պաշտոնակատարը պետք է միջոցներ մշակի աշակերտների համար՝ գաղտնի և անանուն կերպով հայտնելու սպառնալիքների կամ միջադեպերի մասին: Դպրոցի աշխատակիցները, ովքեր ականատես են լինում բռնարարքի, պետք է անհապաղ միջամտեն՝ միջադեպը դադարեցնելու համար, եթե դա անելն վտանգավոր չէ: (Կրթության օրենսգիրք 234.1) Անհրաժեշտության դեպքում, Գերատեսուչը կամ պաշտոնակատարը պետք է ծանուցի զոհի և հանցավորի ծնողներին/խնամակալներին: Նա կարող է նաև ներգրավել դպրոցի խորհրդատուներին, հոգեկան առողջության խորհրդատուներին և/կամ իրավապահ մարմիններին:

ԲՈՂՈՔՆԵՐ ԵՎ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Աշակերտները կարող են ուսուցչին կամ վարչակազմին բանավոր կամ գրավոր բողոք ներկայացնել այն վարքագծի վերաբերյալ, որը նրանք համարում են բռնարարք: Բռնարարքի վերաբերյալ բողոքները պետք է հետաքննվեն և լուծվեն՝ դպրոցի մակարդակով, բողոքի ընթացակարգերի համաձայն: Երբ հաղորդվում է աշակերտի մասին, ով ներգրավված է բռնարարքում, ապա Գերատեսուչը կամ պաշտոնակատարը պետք է հետաքննի և փաստաթղթավորի գործունեությունը և պետք է բացահայտի կոնկրետ փաստեր կամ հանգամանքներ, որոնք բացատրում են ազդեցությունը կամ հնարավոր ազդեցությունը դպրոցական գործունեության, դպրոց հաճախելու կամ թիրախավորված աշակերտի ուսման վրա:

ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Ցանկացած աշակերտ, ով ներքաշվում է դպրոցի տարածքում կամ դրսում այնպիսի բռնարարքի մեջ, որն առաջացնում է կամ կարող է առաջացնել դպրոցական գործունեության կամ դպրոց հաճախելու էական խափանում, պետք է ենթարկվի կարգապահական հետևանքների, որոնք կարող են ներառել ժամանակավոր հեռացում կամ հեռացում՝ համաձայն Կրթաշրջանի քաղաքականությանը և կանոնակարգերին: Համաձայն Կրթության օրենսգրքի 32261 և 48900 բաժինների՝ 4-12-րդ դասարանների ցանկացած աշակերտ, ով մասնակցում է բռնարարական գործողությանը, գտնվելով դպրոցում, դպրոց գնալիս կամ վերադառնալիս կամ դպրոցի կողմից հովանավորվող գործունեության ընթացքում և ճաշի ժամանակ, անկախ նրանից՝ դպրոցում է, թե դրանից դուրս, ենթակա է Կրթաշրջանի կանոններին և քաղաքականությանը, որոնք կարգավորում են աշակերտների կարգապահությունը: Բռնարարքների համար հետևանքները կարող են ներառել դպրոցից ժամանակավոր հեռացում կամ Կրթաշրջանից հեռացում: Կրթաշրջանն իրավասու է կարգապահական միջոցներ կիրառել աշակերտի հանդեպ դպրոցից դուրս վարքագծի համար, երբ բռնի գործողությունը հանգեցնում է կամ, ամենայն հավանականությամբ, կարող է առաջացնել դպրոցի գործունեության կամ հաճախումների էական խանգարում, սպառնում է թիրախավորված աշակերտի ուսմանը, ֆիզիկական կամ հոգեկան առողջությանը կամ անվտանգությանը:

ՎԱՐՔԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

Աշխատակիցներից ակնկալվում է պատշաճ հսկողություն սահմանել վարքի չափանիշները պահպանելու համար և, եթե նկատեն կամ իմանան այդ չափանիշների խախտման մասին, անմիջապես միջամտել կամ օգնություն կանչել: Եթե աշխատակիցը կարծում է, որ խնդիրը չի լուծվել, հարցը պետք է փոխանցվի ղեկավարին կամ վարչակազմին՝ հետագա քննության համար: Աշակերտները, ովքեր խախտում են Կրթաշրջանի կամ դպրոցի կանոններն ու կանոնակարգերը, կարող են ենթարկվել կարգապահական, ներառյալ, բայց չսահմանափակվելով ժամանակավոր հեռացմամբ, հեռացմամբ կամ տեղափոխելով այլընտրանքային ծրագրեր՝ համաձայն խորհրդի քաղաքականության և վարչական կանոնակարգի: Ի լրումն, երբ վարքագիծը ներառում է ահաբեկում, ոտնձգություն կամ այլ վտանգ աշակերտի կամ աշխատակցի հանդեպ, Գերատեսուչը կամ պաշտոնակատարը պետք է պատշաճ օգնություն տրամադրի զոհին և հանցագործին կամ ուղղորդի նման օգնության:

ԾՆՈՂ/ԴՊՐՈՑ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԴՊՐՈՑԻ ՀԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ – ՀԵՌԱԽՈՍԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ Է.ՆԱՄԱԿՆԵՐ ՏՆՕՐԵՆԻՑ

Ծնողների հետ կանոնավոր հաղորդակցությունը կարևոր է ապահովելու համար, որ ծնողներն իմանան դպրոցի գործունեության մասին: GUSD-ն և Ջ. Մարշալ տարրական դպրոցը գնալով ավելի շատ են աշխատում առանց թղթի: Շատ կարևոր է, որ ծնողները գործող հեռախոսահամարներ ու էլ. փոստի հասցեներ տրամադրեն: Ընտանիքները տարվա ընթացքում տնօրենից կարևոր ավտոմատացված հեռախոսային հաղորդագրություններ և էլ. նամակներ կստանան դպրոցական իրադարձությունների, գործունեության և դասերի ավարտի մասին: Կարող եք նաև հետևել Ջոն Մարշալ դպրոցին Facebook-ում, Twitter-ում և պարբերաբար ստուգել մեր կայքը՝ տեղեկությունների համար:

ԿԱՅՔԵՐ –www.gusd.net and www.gusd.net/marshall

Մարշալ դպրոցի կայքը պարունակում է տեղեկություններ դպրոցի մասին, ներառյալ դպրոցական միջոցառումների օրացույցը, գործունեությունները, ծրագրերը, ծնողների օրացույցը, դասերի ավարտը և այլն: Մարշալը նաև ունի Facebook և Twitter, որպես տեղեկատվական ռեսուրսներ՝ **www.facebook.com/marshallterrifictigers** և **www.twitter.com /terrifictigers:** «Like» և «Follow» մեզ: Ներբեռնեք Glendale USD հավելվածը ձեր հեռախոսում՝ թարմ տեղեկատվության համար:

ԼՈՒՍԱՏԱԽՏԱԿ

Առաջիկա կարևոր ամսաթվերի և իրադարձությունների մասին հիշեցումները տեղադրվում են շաբաթական կտրվածքով դպրոցի առջևի լուսատախտակին:

ԺՈՂՈՎՆԵՐ

Եթե ցանկանում եք ձեր երեխայի ուսուցչի հետ ժողով ունենալ, կարող եք թողնել ձեր անունը և հեռախոսահամարը դպրոցի գրասենյակում կամ ուղղակիորեն էլ.նամակ գրել ուսուցչին: Ուսուցիչը կզանգահարի ձեզ հնարավորինս շուտ՝ ժամադրություն նշանակելու համար:

ԾՆՈՂԻ ՁԵՌՆԱՐԿ

Ծնողների այս ձեռնարկը պատրաստվել և հրատարակվել է դպրոցի կողմից: Ձեռնարկը պարունակում է կարևոր տեղեկություններ, ներառյալ դպրոցի կանոնները և կարգապահական քաղաքականությունը, վարչական քաղաքականությունը, աշակերտներին և նրանց ընտանիքներին առաջարկվող հատուկ ծրագրերի և ծառայությունների նկարագրությունը:

ՎԱՐՉԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ ԴՊՐՈՑԻՑ

Եթե ձեր երեխան մի օր չի գնալու դպրոց, խնդրում ենք այդ օրը զանգահարել դպրոցի գրասենյակ և հնարավորինս շուտ հայտնել բացակայության մասին: Մեզնից պահանջվում է ծնողի կամ խնամակալի կողմից բացակայության պատճառաբանություն ապահովել, երբ երեխան բացակայել է դպրոցից: Բաց թողնված դասարանական աշխատանքը կկատարվի, երբ երեխան վերադառնա դպրոց: Ծնողը/խնամակալը պետք է հաստատի բացակայությունը աշակերտի դպրոց վերադառնալուց հետո երեք օրվա ընթացքում: **Աշակերտների դպրոց վերադառնալուց հետո 3 օրվա ընթացքում չհաստատված բացակայություններն ինքնաբերաբար կգրանցվեն որպես անհարգելի բացակայություն և այլևս չեն կարող շտկվել:**

Բացակայության մասին գրությունը պետք է ներառի բացակայության ամսաթվերը և պատճառը ***(տե՛ս ստորև ներկայացված նմուշը):*** Երբ բացակայության պատճառը հիվանդությունն է, պետք է նշել կոնկրետ բնույթը, օրինակ՝ մրսածություն, ջերմություն, կոկորդի ցավ և այլն: Համաձայն նահանգային օրենքի, հարգելի բացակայություններ են միայն հիվանդության, բուժման, հարազատի կորստյան և որոշ իրավական պարտավորությունների պատճառով բացակայությունները: Երկու կամ ավելի օր անընդմեջ բացակայող ցանկացած աշակերտ վերադառնալուն պես պետք է ներկայացնի բժշկի տեղեկանք՝ բացակայությունը հարգելի համարելու համար:

Ընտանիքի հետ արձակուրդները, կրոնական տոները/պարտավորությունները կամ «անձնական գործերը» բացակայության հարգելի պատճառներ չեն համարվում:

Գրության նմուշ

Ամսաթիվ

Հարգելի ուսուցիչ,

Խնդրում եմ Ջոնի բացակայությունը սեպտեմբերի 6-ին և 7-ին հարգելի համարել: Նա մրսածություն ուներ:

Հարգանքով,
Պրն. Սմիթ
Ծնող/Խնամակալ

ԴՊՐՈՑ ԳԱԼՈՒ / ԳՆԱԼՈՒ ԺԱՄԵՐԸ

Աշակերտները չպետք է ժամանեն դպրոց նախքան ժամը 7:30-ը, եթե նրանք դասերից առաջ խնամքի ծրագրում չեն: Խնդրում ենք կարդալ այս ձեռնարկի 2-րդ էջում տեղադրված ամենօրյա ժամանակացույցը: Հետևողական, ժամանակին հաճախումներն առաջնահերթություն են: Խնդրում ենք հաշվի առնել, որ երբ ձեր աշակերտն առավոտյան ուշանում է նույնիսկ 5 կամ 10 րոպե, ապա նա խանգարում է արդեն սկսված ուսուցման ընթացքը: Յուրաքանչյուր ուսումնական րոպե կարևոր և արժեքավոր է: Մենք բարձր ենք գնահատում ձեր աջակցությունն այս հարցում, երբ նախապես ծրագրում եք, որպեսզի ձեր աշակերտը ժամանակին լինի դպրոցում:
Դասերի ավարտից հետո աշակերտները պետք է գնան տուն, եթե դպրոցից հետո Երկարօրյա կամ Ցերեկային խնամքի ծրագրում չեն: Մեր աշակերտների անվտանգությունից ելնելով՝ դասերի ավարտից հետո նրանք չեն կարող խաղալ կամ վազվզել մայթերին կամ խոտածածկ

տարածքների վրա: Աշակերտները պետք է կանգնեն իրենց ծնողի/խնամակալի կողքին: Խնդրում ենք երեխային վերցնելուց հետո չմնալ դպրոցի առջևի խոտածածկ տարածքում:
Ժամը 3-ից հետո երեխաները չեն վերահսկվում: Հետևաբար, ժամը 3-ից հետո մնացած աշակերտները կուղեկցվեն դպրոցի գրասենյակ: Աշակերտներին վերցնելու համար կզանգահարեն խնամակալներին կամ հրատապ պարագաների համար նշված անձանց: **Խնդրում ենք տեղյակ լինել, որ իրավապահները կտեղեկացվեն այն աշակերտների մասին, ում չեն վերցրել մինչև կեսօրից հետո ժամը 3:45-ը: Սա աշակերտի անվտանգությունն ապահովելու նպատակով է, գրասենյակը փակվում է ժամը 4-ին:** Եթե դպրոցից հետո երեխայի խնամքի կարիք ունեք, դիմեք Կրթաշրջանի Երեխաների զարգացման և երեխաների խնամքի (CDCC) ծրագրին (818)247-0775 հեռախոսահամարով՝ ձեր երեխայի համար վերահսկողություն կազմակերպելու համար: Կարող եք մուտք գործել այս հղում՝ լրացուցիչ տեղեկությունների համար https://www.gusd.net/Domain/40**:**

ՀԵԾԱՆԻՎՆԵՐ, ՍԱՀԱՑԱԽՏԱԿՆԵՐ ԵՎ ԱՆԻՎՆԵՐՈՎ ԿՈՇԻԿՆԵՐ

Սրանք միշտ չեն թույլատրվում դպրոցի խաղահրապարակում:
3-5-րդ դասարանների աշակերտները կարող են իրենց հեծանիվներով դպրոց գնալ, եթե նրանք կրեն սաղավարտ և հետևեն հեծանիվների անվտանգության կանոններին:
Մենք չենք կարող պատասխանատվություն կրել դպրոց բերված հեծանիվի գողության կամ վնասվածքի համար:
Հեծանիվների կայանատեղին գտնվում է խաղահրապարակում՝ Chevy Chase փողոցի մուտքի աջ կողմում: Աշակերտներն իրենք պետք է ապահովեն իրենց հեծանիվների կողպեքները:

ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐ ԵՎ ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԽՆՋՈՒՅՔՆԵՐ

Յուրաքանչյուր ուսուցիչ նշանակում է դասարանական երկու խնջույք ուսումնական տարվա համար: Դա կարող է լինել որևէ տոնի կապակցությամբ, ամբողջ դասարանով նշվող ծննդյան տոն կամ տարեվերջյան խնջույք:

ԴԱՍԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՉԻ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆ ՆՇԵԼ

Սա վերաբերվում է TK-5-րդ բոլոր դասարաններին: Դուք կարող եք նշել ձեր երեխայի ծննդյան օրը՝ դասարանին պատշաճ իրեր նվիրելով, ինչպես օրինակ՝ մատիտներ, գրքեր կամ պիտակներ: Խնդրում ենք ձեր երեխայի ուսուցչի հետ ճշտել կոնկրետ կարիքները: Սննդամթերք չի թույլատրվում (թխվածքաբլիթ, կոնֆետ, նվերներով տոպրակներ):

ԾԱՄՈՆ/ԿՈՆՖԵՏ/ԳԱԶՈՎ ԸՄՊԵԼԻՔ

Աշակերտներին արգելվում է ծամոն ծամել, կոնֆետ կամ գազավորված ըմպելիք բերել դպրոց: Խնդրում ենք օգնեք մեզ կիրառելու այս կանոնը՝ մաքուր և հիգիենիկ դպրոց ունենալու համար:

ՓՈՒՉԻԿՆԵՐ

Հելիումի փուչիկներ և փուչիկների փունջ երբևէ չի թույլատրվում դպրոցի շենքում:

ԴԱՍԻ ԸՆԴՀԱՏՈՒՄՆԵՐ

Աշակերտների և նրանց ուսումնական ծրագրերի շահերից ելնելով՝ դասարանային դասավանդումը չպետք է ընդհատվի: Մենք խնդրում ենք, որ դուք նախապես ծրագրեք և օգնեք աշակերտներին՝ պատասխանատվություն կրել իրենց սեփական իրերը՝ ներառյալ ջրի շշերը, ճաշը, PE սրբիչները և այլն, դպրոց բերելու համար: Այս իրերը չեն կարող ընդունվել դպրոցի գրասենյակի կողմից:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴԱՍԱՍԵՆՅԱԿ

Դուք կարող եք տարվա ընթացքում այցելել ձեր երեխայի դասարան: Բայց մենք խնդրում ենք, որ նախքան այցելությունը կապվեք դպրոցի գրասենյակի և ձեր երեխայի ուսուցչի հետ՝ պայմանավորվելու համար: Պետք է առնվազն մեկ օր առաջ պայմանավորվել: Ձեզ կխնդրեն այցելուի քարտ ստանալ գրասենյակից՝ նախքան դասարան մտնելը: Այցելությունները սահմանափակվում են 20 րոպեով: Խնդրում ենք ուղիղ դասարան չգնալ՝ առանց գրասենյակում գրանցվելու:

ՀԱՄԱԿՑՎԱԾ ԴԱՍԱՐԱՆԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

Ուսումնական տարվա սկզբին աշակերտի դասարանական առաջադրանքների ձևակերպումը բարդ գործընթաց է: Այն ներառում է դպրոցի տնօրենի, ինչպես նաև յուրաքանչյուր երեխայի դասարանի ուսուցչի ներդրումը, ով ամենասերտորեն է աշխատել երեխաների հետ նախորդ տարի: Բազմաթիվ գործոններ հաշվի են առնվում, մինչ ուսուցիչները միասին աշխատում են յուրաքանչյուր դասարանի համար ուսումնական համապատասխան խմբավորումներ մշակելու համար: Թեստավորման տվյալները նույնպես հաշվի են առնվում, որպեսզի պահպանվի ամբողջականությունն ու հավասարակշռությունը, որն անհրաժեշտ է յուրաքանչյուր դասարանում լավ ուսումնական միջավայրի համար: Այս կարևոր գործընթացում մեր արհեստավարժ անձնակազմը ուշադիր գնահատում է յուրաքանչյուր երեխայի սոցիալական, ուսումնական և զգացմունքային կարիքները, որոնք նույնպես հաշվի են առնվում նախքան հանձնարարությունը:

Երբ նոր աշակերտներ են ընդունվում մեր դպրոց, նրանք բաշխվում են՝ ելնելով դասարանի չափից: Կրթաշրջանը սահմանել է դասարանի չափը TK-K-ի և 1-ին, 2-րդ, 3-րդ դասարանների համար 24 աշակերտ, մինչդեռ 4-5-րդ դասարանների համար՝ 36 աշակերտ:

Երբ աշակերտը նշանակվում է համակցված դասարանում, ապա երեխան ունենում է եզակի հնարավորություն՝ վայելելու հետաքրքիր ուս. տարի, որը լի է տարբեր ուսումնական փորձառություններով: Ծնողները հաճախ անհանգստանում են և երբեմն զարմանում, թե ինչու են իրենց երեխային տեղավորել համակցված դասարանում: Ինչպես մանրամասնվեց վերը, անձնակազմը և տնօրենը ուշադիր դիտարկում են յուրաքանչյուր աշակերտին՝ նախքան համակցված դասարանում տեղավորելը: Աշակերտները պատահականորեն չեն տեղավորվում, քանի որ մենք ցանկանում ենք համոզվել, որ յուրաքանչյուր երեխա հաջողակ լինի: Համակցված դասարանների համար աշակերտներ ընտրելիս հետևում ենք սույն չափանիշներին. ներկայումս Մարշալ դպրոցի աշակերտներ, ինքնուրույն աշխատողներ, ովքեր ինքնամոտիվացված են և դրական վերաբերմունք են արտահայտում ուսման նկատմամբ, և աշակերտներ, ովքեր հիմնական առարկաներից միջինից բարձր արդյունքներ ունեն:

Համակցված դասարանների աշակերտներն աշխատում են իրենց համապատասխան դասարանային մակարդակի առաջադրանքների վրա և պահպանում են իրենց դասարաններին հատուկ ուսումնական ծրագրերը: Ուսուցիչները հաճախ ընտրում են դասարանների մակարդակի չափորոշիչներ, որոնք համընկնում են և ստեղծում են փոքր խմբեր՝ անհատական աշակերտների կարիքները բավարարելու համար: GUSD-

ն ունի կոնկրետ ուսումնական ծրագրերի տեմպերի ծրագիր և հենանիշային գնահատումներ, որոնք բոլոր ուսուցիչներին հաշվետու են պահում:
Մարշալն ունի բացառիկ անձնակազմ, և մեր բոլոր ուսուցիչներն իրենց կարիերայի ընթացքում համակցված դասարաններում դասավանդելու փորձ ունեն: Բացի այդ, ողջ անձնակազմը վերապատրաստվել է տարբերակված դասավանդման մեջ, որն աջակցում է բոլոր աշակերտներին: Իրենց փորձառությամբ, ճկունությամբ և ստեղծագործ մտքով մեր ուսուցիչներն ի վիճակի են բարեհաջող դասավանդել երկտարիքային դասարանում: Դասարանային մակարդակները միասին են աշխատում՝ աջակցելու համակցված դասարանի ուսուցչին, որը կարող է հերթափոխել գիտության և/կամ հասարակագիտության դասերը, կազմակերպել էքսկուրսիաներ և հատուկ նախագծեր:

Հնարավորության դեպքում անձնակազմը չի տեղավորի աշակերտներին համակցված դասարանում ավելի քան մեկ անգամ Մարշալ դպրոցում սովորելու տարիներին: Այնուամենայնիվ, մեր վերահսկողությունից անկախ հանգամանքների բերումով մենք չենք կարող երաշխավորել, որ աշակերտներն այստեղ սովորելու ընթացքում չեն լինի համակցված դասարանում մեկից ավելի անգամ:

Եթե առկա լինեն ուսանող ուսուցիչներ, ավագ դպրոցի պրակտիկանտներ և թոշակառու ուսուցիչներ, առաջին հերթին կառաջարկվեն համակցված դասարանների ուսուցիչներին:
Ձեր երեխայի ուսուցիչը Դպրոցի վերամուտի երեկոյի ընթացքում կբացատրի համակցված դասարանի լոգիստիկան ու մարտահրավերները, ինչպես նաև ձեզ ուղիներ ցույց կտա՝ ձեր երեխային տանը աջակցելու համար, որ հաջող ուսումնական տարի ունենանք:

ԲՈՂՈՔՆԵՐ/ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արդյունավետություն ապահովելու համար ձեր աշակերտի վերաբերյալ բոլոր բողոքներով կամ մտահոգություններով առաջինը պետք է դիմեք դասարանի ուսուցչին: Գրասենյակում ստացված հեռախոսազանգերը, ֆաքսերը, էլ.նամակները և նամակները՝ դասարանում, խաղահրապարակում տեղի ունեցած միջադեպի կամ աշակերտի ծրագրի վերաբերյալ հարցերով, նախ ուղղվելու են դասարանի ուսուցչին: Միայն ուսուցչի հետ ժողովից հետո ծնողը կարող է հանդիպում պահանջել տնօրենի հետ:

Բարեկրթության քաղաքականություն (GUSD Board Policy 1312.5GUSD Board Policy 1312.5)

Ուսումնական խորհուրդը միտված է պահպանել կանոնավոր ուսումնական և վարչական գործընթաց՝ դպրոցները և Կրթաշրջանի տարածքները զերծ պահելու խանգարումներից և կանխելու համար չարտոնված անձանց մուտքը դպրոց/կրթաշրջան: Կրթաշրջանի աշխատակազմը հարգանքով պետք է վերաբերվի գործընկերներին, աշակերտներին, ծնողներին և հանրությանը և ի պատասխան՝ ակնկալում են նույնը: Այս քաղաքականությունը նպատակ չունի որևէ անձի զրկել ազատ արտահայտվելու իրավունքից, այլ միայն ապահովելու, հնարավորության և ողջամտության սահմաններում, անվտանգ, ոտնձգություններից զերծ աշխատավայր մեր աշակերտների և անձնակազմի համար: Այս Կրթաշրջանի աշակերտներին դրական օրինակ ծառայելու նպատակով, Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանն ակնկալում է քաղաքակիրթ և դրական հաղորդակցություն: Կրթաշրջանը չի հանդուրժի վարքագիծ, որը կարող է թվալ կոպիտ, անտարբեր, կտրուկ, ոչ զգայուն, փոփոխական, թշնամական, ագրեսիվ գործողություններ, բարձր, անպարկեշտ և/կամ վիրավորական արտահայտություններ: Կրթաշրջանը ձգտում է ունենալ աշխատակիցների, աշակերտների, ծնողների և հանրության համագործակցությունն այս հարցում: Կրթաշրջանի անձնակազմը պետք է վերապատրաստվի՝ ճանաչելու և անդրադառնալու համար Խորհրդի Քաղաքականությունը խախտող վարքագծին: Աշխատակիցները, աշակերտները և ծնողները կտեղեկացվեն այս

քաղաքականության մասին և կտրամադրվեն համապատասխան միջոցներ, որոնք առկա են նրանց համար ոչ բարեկիրթ վարքագծի դեմ պայքարում:

ՀԱՄԱԶԳԵՍՏԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Ջոն Մարշալի ուսուցչական կազմը, անձնակազմը և վարչակազմը միտված են բոլոր աշակերտների համար դրական ուսումնական մթնոլորտ ստեղծելու: Լավ հարդարանքը նշում է բնավորության և մոտիվացիայի տարբերությունը, որը պետք է առանձնացնի Ջոն Մարշալի աշակերտին: Դպրոցը աշակերտների աշխատանքի վայրն է, և մենք ցանկանում ենք, որ մեր աշակերտների հագուստն արտացոլի մեր դպրոցի պրոֆեսիոնալ բնույթը: Հետևաբար, բոլոր հագուստները պետք է լինեն կոկիկ, մաքուր և ընդունելի տեսքի: Ջոն Մարշալ տարրական դպրոցն ունի համազգեստի պարտադիր քաղաքականություն: Մենք ակնկալում ենք, որ Մարշալի բոլոր աշակերտները կրեն դպրոցական համազգեստ, որը բաղկացած է մուգ կապույտ տապատից/կիսաշրջազգեստից և սպիտակ կամ կարմիր վերնաշապիկից: Եթե ցանկանում եք, որ ձեր աշակերտը համազգեստից բացի այլ հագուստ հագնի, խնդրում ենք դիմել դպրոցի գրասենյակ՝ հանդիպելու տնօրենի հետ: Բոլոր աշակերտները պետք է ենթարկվեն Կրթաշրջանի 5132 վարչական կանոնակարգին, որը վերաբերում է Համազգեստի քաղաքականությանը: Հավելյալ տեղեկությունների համար տեսե՛ք այս հղումը՝ GUSD Dress Code Policy :

Հետևյալը վերաբերում է աշակերտների բոլոր հագուստներին, ներառյալ դպրոցական համազգեստը.

Տաբատները, շորտերը, կիսաշրջազգեստները, զգեստները պետք է վրակարված լինեն: Ջինսեր, սպորտային/բամբազե սպորտային տաբատներ և տրիկոներ (առանց դրանց վրայից կիսաշրջազգեստ հագնելու) չեն թույլատրվում:

Վերնաշապիկները և հագուստները ՉՊԵՏՔ Է մերկացնեն գոտկատեղը, երբ ձեռքերը բարձրացվեն գլխից վեր:

Շորտերը, կիսաշրջազգեստները և զգեստները պետք է լինեն ազդրի մեջտեղից ոչ կարճ: Հագուստը պետք է պատշաճ կերպով նստի աշակերտի վրա:

Անվտանգության նկատառումներից ելնելով՝ խորհուրդ է տրվում գուլպաներ և թենիսի կոշիկների նման փակ կոշիկներ հագնել: Չեն թույլատրվում լույսերով կամ անիվներով կոշիկներ:

Հետևյալները <u>ՉԵՆ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ</u>.

Ավազակախմբերի հետ կապված ցանկացած հագուստ, ինչպիսիք են՝ մարզաշապիկներ/շապիկներ/բաճկոններ պրոֆեսիոնալ սպորտային լոգոներով, շատ լայն շալվարներ/շորտեր/կոմբինիզոններ, գրպանի/ժամացույցների շղթաներ: Ներսում երբևէ չի կարելի կրել գլխարկ/բաճկոնի գլխարկ, այդ թվում միջանցքներում, դասասենյակներում, գրադարանում, համակարգչային լաբորատորիայում, ճաշարանում, դահլիճում:

Որևէ տեսակի տեսանելի ապրանքանիշով/լոգոներով/պատկերներով հագուստ (բացառությամբ Մարշալ դպրոցի սպիրտային վերնաշապիկների, եթե առաջարկվում է):

Չեն թույլատրվում բարակ ուսագլխով (մեկ դյույմից պակաս) կամ մեջքի կամ կրծքավանդակի վրա մեծ բացվածքով, առանց ուսագլխի և/կամ թափանցիկ հագուստներ:

Չեն թույլատրվում պլատֆորմով, առանց ետնամասի, բարձրակրունկ կոշիկներ, անիվներով, լույսերով կամ ձայն հանող կոշիկներ:

Բանդաններ կամ մազերի ցանցեր

Հագուստ կամ զարդեր՝ անպատշաճ կարգախոսներով, նկարներով կամ որևէ բան, որը պարունակում է կոպիտ, գռեհիկ, սրբապիղծ, սեռական բնույթի արտահայտություններ, կամ որը խթանում է որևէ ձևի նախապաշարմունք կամ բռնություն

Հագուստ կամ զարդեր, որոնք պատկերում կամ խթանում են թմրամիջոցների, ալկոհոլի կամ ծխախոտի օգտագործումը

Չափից դուրս շատ զարդեր, աքսեսուարներ, սանրվածքներ կամ կեղծ եղունգներ, որոնք կարող են վտանգել երեխայի անվտանգությունը կամ շեղել ուրիշների ուշադրությունը ուսումից
Աշակերտները չեն կարող շպարվել, դպրոց բերել կոսմետիկա: Մազերը պետք է լինեն իրենց բնական գույնի:
Հագուստի կանոնների խախտումները կհանգեցնեն հետևյալ գործողություններին.
Ծնողից կպահանջվի պատշաճ հագուստ բերել գրասենյակ, որտեղ աշակերտը կմնա՝ մինչև նրա ժամանումը: Եթե մենք չկարողանանք կապ հաստատել ծնողի հետ, ապա աշակերտը օրվա մնացած ընթացքում կկրի գրասենյակից փոխառած հագուստ: Տրված հագուստը պետք է լվանալ և վերադարձնել գրասենյակ 3 օրվա ընթացքում: Ծնողներից կգանձվի ժամանակին չվերադարձված հագուստի փոխարինման արժեքը: Դասերից հետո պահել և/կամ ժամանակավոր հեռացում կարող է կիրառվեն հագուստի կանոններին դիտմամբ չենթարկվելու կամ կրկնվող խախտումների դեպքում:

iREADY

iReady-ն համացանցի վրա հիմնված, 100%-ով հիմնական առարկաների չափանիշների ծրագիր է ընթերցանությունից (ELA) և մաթեմատիկայից: GUSD-ի բոլոր աշակերտները տարին երեք անգամ անցնում են iReady-ի ադապտիվ ախտորոշիչ գնահատում, որպեսզի որոշվեն նրանց ներկայիս կարողություններն ընթերցանությունից և մաթեմատիկայից և բացահայտվեն նրանց թերացումները: Այնուհետև iReady ծրագիրն օգնում է յուրաքանչյուր աշակերտի ուսուցման ուղին գտնել՝ նրանց առանձնահատուկ կարիքները բավարարելու համար: K-5-րդ դասարանների բոլոր աշակերտները շաբաթական կտրվածքով կատարում են iReady-ի դասերը: Որպեսզի աշակերտներն առաջադիմեն, նրանց խորհուրդ է տրվում շաբաթական երկու ժամ ծախսել՝ շաբաթական մեկ ժամ ELA-ի և մեկ ժամ մաթեմատիկայի վրա: Աշակերտները կաշխատեն iReady-ի վրա դպրոցական Համակարգիչների լաբորատորիա կամ Chromebook լաբորատորիա այցերի ժամանակ և կարող են տանն ավարտել iReady-ի դասերը՝ հասնելու իրենց 2-ժամյա նպատակին: Որոշակի ժամերին, դասերից հետո, կառաջարկվի նաև միջամտություն iReady-ի դասերին: iReady-ն տարբերակված ուսուցում է, որը գործում է: Հիշեք, որ iReady-ին կարող է հանձնարարվել որպես տնային աշխատանք՝ նույնպես այս նպատակն իրականացնելու համար:

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ELO)

- Մենք կարծում ենք, որ ընդլայնված ուսուցման հնարավորություններն օգնում են հաստատել ուսումնառության սովորույթներ, որոնք էական նշանակություն ունեն և հանդիսանում են համագործակցություն տան և դպրոցի միջև:
- Ի լրումն ամենօրյա ընթերցանությանը, լրացուցիչ առաջադրանքներ կարող են հանձնարարվել տարբեր պատճառներով՝ ամրապնդելու տարրական հմտությունները, ընդլայնելու դասարանում սովորածը, զարգացնելու նախաձեռնությունը, պատասխանատվությունը,և ինքնորոշումը և խթանելու ինքնուրույն մտածողությունը:
- Օգտակար կլիներ, եթե ամեն երեկո մի քանի րոպե հատկացնեք դասարանում ուսուցանված հասկացությունները վերանայելու համար:
- Երբ աշակերտը բացակայում է, վերադառնալուց հետո նա կկատարի կամ կավարտի բաց թողնված աշխատանքները կամ առաջադրանքները:

Կալիֆոռնիայի նահանգային չափանիշները պահանջում են նոր տեսակի ուսումնառություն աշակերտների համար, ինչպես նաև նոր տեսակի դասավանդում մանկավարժների համար: Մեր նահանգային չափանիշների առաջնային նպատակն է ապահովել, որ մեր աշակերտները պատրաստ լինեն քոլեջի և կարիերայի համար: Որպես այդպիսին, այս չափորոշիչները կենտրոնանում են այն բանի վրա, որ աշակերտները դառնան ստեղծագործ, համագործակցող և քննադատ հաղորդակիցներ և մտածողներ: Դասարանում ուսուցիչները կաշխատեն դրա վրա: Բացի այդ, մեր անձնակազմն աշխատել է միասնաբար՝ հարմարեցնելու մեր դասարանային աշխատանքները և առաջադրանքները՝ աջակցելու այս ուսումնական նպատակներին:

Աշակերտներին կարող են խնդրել երեկոյան կատարել գրիչով և թղթով ավանդական առաջադրանքներ
Աշակերտներից **պահանջվում է** առնվազն 20 րոպե կարդալ ամեն երեկո: Սա կարող է ներառել աշակերտների ինքնուրույն ընթերցանությունը կամ նրա համար ընթերցելը: Աշակերտները կարող են կարդալ ցանկացած տեսակի ընթերցանության նյութ ցանկացած թեմայով, որը որ նրանց հետաքրքրում է:
Մեր Կրթաշրջանի լայնածավալ առցանց iReady ուսումնական ծրագիրը հասանելի է աշակերտներին տանն օգտագործելու համար:
Ուսուցիչները տուն կուղարկեն տեղեկատվություն iReady մուտք գործելու և գաղտնաբառի վերաբերյալ:
Ուսուցիչները կարող են նաև առաջարկել գործունեություն՝ հմտություններ մշակելու կամ ընտանեկան գործունեության համար, որոնք աջակցում են ուսմանը:
Աշակերտներին **կարող է** առաջարկվել տանը աշխատել նախագծերի հատվածների վրա:
Ուսուցիչները **կարող են** տուն ուղարկել այնպիսի իրեր, ինչպիսիք են՝ ուսումնական ուղեցույցներ, բառային օղակներ, մաթեմատիկական օղակներ, ուղղագրական ցուցակներ, բառերի ցուցակներ և այլն:

ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ Է ԾՆՈՂԸ ՆԵՐԳՐԱՎՎԵԼ

Ծնողները խրախուսվում են աջակցել իրենց երեխայի ուսմանը հետևյալ ձևերով.

Ծանոթացե՛ք դասարանային ընթացակարգերին, թե ինչպես են ընդլայնված ուսուցման հնարավորությունները հանձնարարվում և կազմակերպվում ձեր երեխաներից յուրաքանչյուրի ուսուցչի կողմից՝ ուսումնական տարվա սկզբում:
Ուսման համար տրամադրեք հետևողական կոնկրետ տարածք և անհրաժեշտ նյութեր՝ առաջադրանքները կատարելու համար:
Սահմանեք որոշակի ժամանակ և վերահսկեք դասերից հետո կատարվող գործունեությունը, որ բավարար ժամանակ ունենան հանձնարարությունը կատարելու համար:
Խրախուսեք ձեր երեխայի ջանքերը և հետաքրքրություն ցուցաբերեք նրանց առաջադրանքների նկատմամբ:
Եթե առաջադրանքների վերաբերյալ հարցեր են ծագում, և ձեր երեխան օգնություն է խնդրում, պատասխանները տալու փոխարեն նրան հարցեր տվեք կամ աշխատեք օրինակների միջոցով:
Ստուգեք առաջադրանքները և խրախուսեք ձեր երեխային՝ ուղղել սխալները:

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆ

Երբ երեխային պետք է դպրոցից վերցնել անխուսափելի անձնական պատճառներով, ծնողները կարող են խնդրել իրենց երեխայի դպրոցական առաջադրանքները: Գործում է կամավոր Ինքնուրույն ուսումնառության ծրագիր, որը հնարավորություն է տալիս աշակերտներին ետ չմնալ, երբ նրանք բացակայեն ավելի քան 10 ուսումնական օր:

Ինքնուրույն ուսումնառության ծրագրին մասնակցելու համար ծնողը/խնամակալը պետք է դպրոցին ծանուցի առնվազն երկու շաբաթ առաջ:
Ինքնուրույն ուսումնառության ծրագրի համար ծնողի խնդրանքի բավարարումը հիմնված է փաստարկների վրա, որ աշակերտը կարող է ինքնուրույն աշխատել, և որ նա կկատարի հանձնարարված աշխատանքը:
Դպրոցից պահանջվում է այս ծրագրին մասնակցող յուրաքանչյուր աշակերտի համար գրանցումներ պահել՝ ներառյալ աշակերտի ավարտված և գնահատված աշխատանքների պատճենները:
Աշակերտը, ծնողը, ուսուցիչը և տնօրենը պետք է պայմանագիր ստորագրեն:
Հիմնվելով GUSD-ի խորհրդի քաղաքականության 6158-ի վրա՝ ոչ մի բացառիկ կարիքներ ունեցող անձ, ինչպես սահմանված է Կրթության օրենսգրքում, չի կարող ընդգրկվել Ինքնուրույն ուսումնառության ծրագրում, եթե նրա Անհատական ուսումնական ծրագիրը (IEP) հատուկ չի նախատեսում այդպիսի ընդգրկում:

ԿՈՐԱԾ ԵՎ ԳՏՆՎԱԾ ԻՐԵՐ

Ամեն տարի գտնվում և ետ չի պահանջվում գեղեցիկ հագուստների մեծ քանակություն: **Խնդրում ենք անունները գրել ձեր երեխայի հագուստի, բաճկոնների և ճաշի տուփերի վրա, որպեսզի կորցրած իրերը հնարավոր լինի անհապաղ վերադարձնել**: Մեր կորած և գտնված իրերը գտնվում են գրասենյակում: Մենք ետ չպահանջված հագուստները նվիրաբերում ենք ամեն ամսվա վերջին:

ԴԵՂՈՐԱՅՔ/ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐ

Տե՛ս «Առողջապահական ծառայություններ»:

ԱՆՁՆԱԿԱՆ ԻՐԵՐ

Համաձայն GUSD խորհրդի քաղաքականության՝ բջջային հեռախոսները/էլեկտրոնային ազդանշանային սարքերը պետք է անջատված լինեն ուսումնական օրվա ընթացքում: Խաղալիքները, խաղահրապարակի սարքավորումները, փողը (բացառությամբ ճաշի փողի), բեյսբոլի քարտերը, փոխանակելի կամ կոլեկցիոն քարտերը, iPad-ները, Apple ժամացույցները կամ այլ էլեկտրոնիկա և անձնական իրեր չպետք է բերվեն դպրոց: Դպրոցը չի կարող պատասխանատվություն կրել նման ունեցվածքի վնասվելու կամ կորստի համար: Եթե պարզվի, որ այդ առարկաներից մեկը գտնվում է դպրոցում, այն կարող է առգրավվել և աշակերտը կարող է ենթարկվել կարգապահական պատասխանատվության: Ծնողները պետք է ետ վերցնեն այդ իրերը:

ԱՆՁՐԵՎՈՏ ՕՐՎԱ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

Անձրևոտ առավոտներին ուսուցիչները առավոտյան ժամը 8:00-ին իրենց սենյակներում են ողջունում աշակերտներին: Աշակերտները դեռևս պետք է ներս մտնեն Chevy Chase փողոցի դարպասից, ոչ թե կենտրոնական մուտքից:
Կեսօրյա ճաշի ընթացքում օգնականները շարունակաբար վերահսկում են աշակերտներին:
Օրվա ընթացքում աշակերտները սովորականի պես դասասենյակում են ընդմիջումներն անցկացնում և հնարավորություն ունեն օգտվելու զուգարաններից:
Վստահացեք, որ ձեր երեխան հովանոց կամ անջրանցիկ բաճկոն ունենա: Աշակերտները պետք է նաև դուրս գան խաղահրապարակի դարպասներից, այլ ոչ թե մուտքի դռներից: Սա խստորեն կվերահսկվի:

ԴԱՍԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՇԱԿԵՐՏԻՆ ՎԵՐՑՆԵԼԸ

Մենք խրախուսում ենք ձեզ բժշկի և ատամնաբույժի ժամադրություն նշանակել ձեր երեխայի դասերի ավարտից հետո: Ուսուցման վրա ազդում են վաղ գնալը, ինչպես նաև ուշացումները: Մենք ձեր երեխային տրամադրում ենք լիարժեք ուսուցում առավոտյան ժամը 8:10-ից մինչև ձեր երեխայի դասերի ծրագրված ավարտը: Խնդրում ենք օպտիմալացնել ձեր երեխայի ուսումնառությունը՝ նրան ամբողջ ուսումնական օրը դպրոցում թողնելով: Աշակերտները, ովքեր պետք է լքեն դպրոցը դասերի ժամանակ, պետք է դուրս գրանցվեն և գնան գրասենյակից: Խնդրում եմ, եկեք գրասենյակ, և մենք կուղարկենք ձեր երեխային ձեզ մոտ:
Աշակերտները ՉԵՆ հանձնվի որևէ մեկին, ում անունը հրատապ իրավիճակների քարտում կամ կոնտակտային ցանկում չկա:

ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ԹԵՐԹԻԿՆԵՐ / ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՁԵԿՈՒՅՑՆԵՐ

Առաջադիմության թերթիկները տրվում են տարին երեք անգամ: Ծնող-ուսուցիչ հանդիպում կարող է անցկացվել ցանկացած ժամանակ՝ աշակերտի առաջընթացը քննարկելու համար: Առաջընթացի մասին հաշվետվությունները տուն են ուղարկվում հաշվետու ժամանակաշրջանից վեց շաբաթ առաջ՝ ծնողներին տեղեկացնելու համար, որ երեխան անբավարար գնահատական է ստանալու, եթե տվյալ առարկայական ոլորտում բարելավում չցուցաբերի:

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ

Դպրոցում ողջ անձնակազմի և աշակերտների անվտանգությունն ու ապահովությունը մեր առաջնահերթությունն է:
Դպրոցի բոլոր դարպասները փակ են պահվում դպրոցական ժամերին:
Այցելուների համար անցաթուղթը և մուտքի մոտ գրանցումը պարտադիր են բոլոր նրանց համար, ովքեր այցելում են դպրոց և/կամ մտնում դասարաններ առավոտյան ժ. 7:30-ից մինչև ժ. 4:00-ն ընկած ժամանակահատվածում:

ՇԱՏ ՇՈԳ (“SCORCHER”) ՕՐԵՐ

Երբ ջերմաստիճանը բարձրանում է 98 աստիճանից, գործում են հետևյալ ընթացակարգերը.
Չխաղալ խաղահրապարակի սարքավորումների վրա կամ գնդակներով
Չվազել
Հնարավորինս շատ նստել ստվերում
Օրվա ընթացքում շատ ջուր խմել
Դրսում ֆիզկուլտուրայի դաս չանցկացնել ցածր կամ բարձր դասարանների համար, եթե հայտարարված է «Շատ շոգ օր»:

ՍԵՌԱԿԱՆ ՈՏՆՁԳՈՒԹՅՈՒՆ

Կրթության խորհուրդն արգելում է որևէ աշակերտի նկատմամբ սեռական ոտնձգությունը մեկ այլ աշակերտի, աշխատակցի կամ Կրթաշրջանից այլ անձի կողմից կամ Կրթաշրջանում:
Ուսուցիչները պետք է իրենց աշակերտների հետ տարիքին համապատասխան ձևով քննարկեն քաղաքականությունը և վստահեցնեն նրանց, որ նրանք չպետք է հանդուրժեն որևէ տեսակի սեռական ոտնձգություն:
4-րդից 12-րդ դասարանների ցանկացած աշակերտ, ով ընդգրկվել է սեռական ոտնձգություններում, ենթակա է կարգապահական տույժերի՝ ընդհուպ մինչև Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանից հեռացում:

ՈՒՇԱՑՈՒՄՆԵՐ

Ճշտապահությունը կյանքում կենսական հմտություն է և կարևոր սովորություն, որը պետք է վաղ տարիքում ձևավորել: Խնդրում ենք այնպես ծրագրել, որ աշակերտը ժամանակին դպրոց հասնի: Առավոտյան ժամը 08:10-ից հետո ժամանող աշակերտները պետք է ուղեկցողի հետ միասին գնան դպրոցի գրասենյակ: Առավոտյան ժամը 8:15-ից հետո ժամանած աշակերտները կստանան ուշացածի/շատ ուշացածի թերթիկ (ըստ գալու ժամի): Հաճախումները գրանցվում են ամեն օր:
Ոտքով կամ մեքենայով դպրոց եկողների համար դարպասները փակվում և կողպվում են առավոտյան ուղիղ ժամը 8:10-ին:
Բոլոր շատ ուշացումները գրանցվում են հաճախումների գրանցամատյանում և առաջադիմության թերթիկում:
Աշակերտը պետք է լինի իր տեղում և պատրաստ աշխատելու առավոտյան ժամը 08:15-ին դասի աշխատանքը կատարելու:
Ուշացումները կանխելու համար խնդրում ենք ձեր երեխային բերել առավոտյան ժամը 7:30-ից մինչև 8:00-ը, - խաղահրապարակը վերահսկվում է:

ՀԵՌԱԽՈՍՆԵՐ

Մենք աշակերտներին թույլ չենք տալիս օգտվել հեռախոսից ուսումնական օրվա ընթացքում, բացառությամբ արտակարգ իրավիճակների և ուսուցչի թույլտվությամբ: Աշակերտների բջջային հեռախոսները դպրոցում երբեք չպետք է օգտագործվեն:
Մոռացված առաջադրանքները, երաժշտական գործիքները, նախաճաշը կամ փողը ՉԵՆ հանդիսանում արտակարգ իրավիճակներ:
Այս քաղաքականությունն անհրաժեշտ է՝ մեծացնելու համար աշակերտի պատասխանատվությունը և ապահովելու, որ դպրոցի հեռախոսագծերն ազատ մնան եկող և շտապ օգնության զանգերի համար:
Դպրոցում գտնված ժամանակ բջջային հեռախոսները պետք է անջատված մնան և պահվեն աշակերտի պայուսակում:
Եթե պարզվի, որ աշակերտներն օգտագործում են իրենց բջջային հեռախոսը խոսելու, հաղորդագրություններ գրելու, նկարելու և/կամ տեսանկարահանելու համար, ապա այն կառգրավվի և կվերադարձվի ծնողին:

ԴԱՍԱԳՐՔԵՐ

Դասագրքեր տրամադրվում են բոլոր աշակերտներին:
Աշակերտի պարտականությունն է հետևել, որ բոլոր գրքերը խնամքով պահվեն և հնարավորության դեպքում կազմվեն:
Կորած կամ վնասված դասագրքերը և գրադարանի գրքերը պետք է փոխարինվեն ծնողի հաշվին:

ԹԵՍՏԱՎՈՐՈՒՄ

Ընթերցանության/լեզվարվեստի և մաթեմատիկայի գնահատումներն անցկացվում են դասարանում շարունակական հիմունքներով՝ որոշելու, թե որքանով են աշակերտները յուրացնում ուսուցանվող նյութը և բավարարում դասարանային մակարդակի չափանիշները:

ELPAC – Անգլերենի իմացության Կալիֆոռնիայի քննություն– դաշնային օրենքը պահանջում է, որ Կալիֆոռնիա նահանգն այս թեստն անցկացնի դպրոց նոր ընդունված երկլեզվու աշակերտների և անգլերեն սովորող աշակերտների համար՝ որպես ամենամյա գնահատում:

Smarter Balanced/CAASPP գնահատումները

Ամփոփիչ. Պարտադիր համապարփակ հաշվետվողականությունը, որը ներառում է համակարգչային հարմարեցված գնահատումներ և կատարողականի առաջադրանքներ, որ անց են կացվում ուսումնական տարվա վերջին 12 շաբաթների ընթացքում՝ 3-8-րդ և 11-րդ դասարաններում անգլերեն լեզվարվեստից (ELA), գրագիտությունից և մաթեմատիկայից. Այն ձևավորված է վավերական, հուսալի և արդարացի կերպով չափելու աշակերտների՝ քոլեջին և կարիերային պատրաստ լինելու համար առաջադիմության անհրաժեշտ գիտելիքներն ու հմտությունները. Օգտագործվում են համակարգչային հարմարեցված թեստավորման ուժեղ կողմերը (օրինակ՝ արդյունավետ և ճշգրիտ չափումներ նվաճումների ողջ տիրույթում և արդյունքների արագ հաշվարկում). և, Համակարգչային հարմարվողական տարրերի և կատարողական առաջադրանքների հիման վրա կազմվում են բովանդակության բնագավառի միավորները:

Միջանկյալ. Կամընտիր համապարփակ և բովանդակային կլաստերային չափումներ, որոնք ներառում են համակարգչային հարմարվողական գնահատումներ և կատարողականի առաջադրանքներ, որոնք իրականացվում են տեղում որոշված ինտերվալներով ողջ ուսումնական տարվա ընթացքում. Արդյունքները ներկայացվում են նույն կերպ, ինչպես ամփոփիչ գնահատման համար, որպեսզի տեղեկատվություն տրամադրվի աշակերտների առաջընթացի մասին. Ծառայում են որպես բացատրող ուղեցույցների աղբյուր, որոնք օգտագործում են հրապարակված նյութեր և առաջադրանքներ. Հիմնված է ճանաչողական զարգացման տեսության վրա, թե ինչպես է ուսումնառությունը առաջաջընթաց ապրում դասարաններում և ինչպես է ժամանակի ընթացքում առաջանում քոլեջի և կարիերայի պատրաստվածությունը. Ներգրավել ուսուցչի մեծ դերը կառուցողական պատասխանների և կատարողական առաջադրանքների մշակման և գնահատման գործում. Ուսուցիչներին և վարչակազմին տալ ճկունություն՝ ընտրելու միջոցների խումբ, որն ապահովում է CCSS-ում ներկառուցված հատուկ բովանդակության կլաստերների խորը, կենտրոնացված գնահատում. Իրականացնել այս գնահատումներն ուսումնական տարվա կարևոր հատվածներում - օգտագործել արդյունքները՝ չափորոշիչների համեմատ աշակերտների ուժեղ և թույլ կողմերն ավելի լավ հասկանալու համար. Աջակցել նահանգային մակարդակի հաշվետու համակարգերին՝ օգտագործելով դասընթացի ավարտի գնահատումները: **Այցելեք www.SmarterBalanced.org Smarter Balanced Assessment Consortium-ի վերաբերյալ ավելին իմանալու համար**.

ԱՅՑԵԼՈՒՆԵՐ ԵՎ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆՆԵՐ

Բոլոր այցելուները և կամավորները պետք է գրանցվեն դպրոցի գրասենյակում, երբ ժամանում են դպրոց ժամը 7:30-ից 4:00-ը ժամանակահատվածում: Այցելուի անցագիրը պետք է երևա և կրվի դպրոցում գտնված ամբողջ ընթացքում: Դասարան այցելելու համար անհրաժեշտ է ժամադրություն ունենալ ուսուցչի և տնօրենի հետ և դրանք չեն կարող գերազանցել (20) րոպեն: Այցելության/ուսումնասիրման ժամանակ այցելուներին կարող է ուղեկցել անձնակազմի անդամը: Մենք խրախուսում ենք կամավորներին ակտիվ մասնակցություն ունենալ դպրոցի կյանքին: Կամավորներն օգնում են դասասենյակներում, գրադարանում, համակարգչային լաբորատորիայում և անմիջականորեն աշխատում երեխաների հետ: Կամավորները պետք է գրասենյակին ներկայացնեն տուբերկուլյոզի թեստի արդյունք և ուսուցչի հետ պայմանավորվեն կամավոր աշխատանքի ժամերը սահմանելու հարցում: Կամավորները պետք է վերապատրաստվեն դպրոցի անձնակազմի կողմից և ստորագրեն կամավորների ուղեցույցները:

P.R.I.D.E. – ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԻՐԱՊԵՍ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԵՎ ՆՎԻՐՎԱԾ ԾՆՈՂՆԵՐ

Մարշալ դպրոցի աշակերտները և ուսուցիչները ծնողների աջակցության, մասնակցության և ներգրավվածության կարիքն ունեն՝ օգնելու մեր դպրոցին և ծրագրերին: Ծնողները խրախուսվում են լինել Marshall PRIDE-ը՝ պարտավորվելով կազմակերպել, հաճախել և աջակցել դպրոցական միջոցառումներին: Խնդրում ենք քննարկել գրասենյակի կամ ձեր երեխայի ուսուցչի հետ դասարանում կամ գրասենյակում շարունակաբար կամավոր աշխատելու հնարավորությունները՝ հարմարվելով ձեր և մեր ժամանակային գրաֆիկին:

ԴՊՐՈՑԻ ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆ

Ջոն Մարշալի Դպրոցական խորհուրդը կազմված է ուսուցիչներից, օժանդակ անձնակազմից, ծնողներից և ադմինիստրատորից: Այս հանձնախումբը հանդիպում է ուսումնական տարվա ընթացքում չորս անգամ՝ ակտիվորեն մասնակցելով դպրոցական ծրագրերի և բյուջեի շուրջ որոշումների կայացմանը, ինչպես նաև դպրոցին վերաբերող թեմաների քննարկմանը: Բացի այդ, դրա նպատակն է օգնել մշակել, առաջարկել և իրականացնել դպրոցի բարելավման ծրագիր: Դպրոցական խորհրդի նիստերը բաց են, և շահագրգիռ ծնողներին խրախուսվում է մասնակցել:

ՀԱՏՈՒԿ ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ / ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

Ջոն Մարշալ դպրոցի համակարգչային լաբորատորիան առաջարկում է ժամանակակից համակարգիչներ, կրթական ծրագրեր և փորձառու ուսուցիչ, որն իրականացնում է 21-րդ դարի դասավանդում: Համակարգչային լաբորատորիան միացված է Wifi-ին, և աշակերտներն օգտագործում են կենտրոնը աշակերտական հաշվետվությունների, դասարանական և դասարանի մակարդակի նախագծերի, մեքենագրելու և ծրագրի ուսման համար: Ջոն Մարշալ տարրական դպրոցի յուրաքանչյուր դասարան հնարավորություն ունի շաբաթը մեկ անգամ այցելել համակարգչային լաբորատորիա: Որպեսզի աշակերտները կարողանան օգտվել ինտերնետից, նրանք պետք է բերեն իրենց ծնողների կողմից ստորագրված թույլտվության թերթիկ: Թույլտվության թերթիկները տրվում են աշակերտներին համակարգչային լաբորատորիայում: Բացի այդ, աշակերտներին հասանելի են ավելի քան 200 Google Chromebook-ներ՝ դասարանում օգտագործելու համար: Մեր նպատակն է, որ բոլոր աշակերտները դառնան տեխնոլոգիային տիրապետող:

ԴԱՍԵՐԻՑ ՀԵՏՈ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԾՐԱԳՐԵՐ – CDCC

Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանն առաջարկում է տարրական դպրոցի երեխաների խնամքի հնարավորություններ տարբեր տեսակի գրաֆիկների համար: Խնդրում ենք մուտք գործել այս հղումը this link լրացուցիչ մանրամասների համար: Դուք կարող եք նաև կապվել CDCC գրասենյակի հետ՝ տեղեկություններ ստանալու/դիմումի համար (818)247-0775:

ԴԱՍԵՐԻՑ ՀԵՏՈ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԱՆԳՍՏՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ (ASYSP):

Գլենդելի քաղաքապետարանի համայնքային ծառայությունների և զբոսայգիների վարչությունն առաջարկում է երիտասարդական սպորտի և հանգստի ծրագիր 4-րդ և 5-րդ դասարանների Մարշալ դպրոցի աշակերտների համար: Աշակերտները սովորում և խաղում են տարբեր սպորտաձևեր տարվա ընթացքում՝ ըստ սեզոնի. Աշուն – ֆլագ ֆուտբոլ, ձմեռ – բասկետբոլ, գարուն – ֆուտբոլ, ամառ – վոլեյբոլ. Ծրագիրը գործում է երկուշաբթիից հինգշաբթի օրերին՝ դասերից հետո մինչև երեկոյան ժամը 5:00-ը: Ամեն չորեքշաբթի թիմերը տեղափոխվում են տեղական այգի՝ խաղալու այլ դպրոցների թիմերի հետ: Ծնողներին տրամադրվում են մանրամասն տեղեկություններ, և քաղաքապետարանի ծրագրի ղեկավարը կարող է պատասխանել հարցերին:

ԱՆԳԼԵՐԵՆ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ (ELL) ԾՐԱԳԻՐ

Ջոն Մարշալ տարրական դպրոցն ապահովում է որակյալ կրթություն յուրաքանչյուր աշակերտի համար: Կրթաշրջանը մշակել է բազմակողմանի ծրագիր՝ ապահովելու, որ աշակերտները վարժ տիրապետեն անգլերենին, հասնեն իրենց

առավելագույն ուսումնական ներուժին, զարգացնեն ինքնագնահատանքը և բազմամշակութային ըմբռնումը: Անգլերենի իմացության զարգացման ծրագիրը(ELD) անգլերենի սահմանափակ իմացությամբ յուրաքանչյուր աշակերտին հնարավորություն է տալիս ձեռք բերել անգլերենի հմտություններ, որոնք անհրաժեշտ են հաջող ուսումնական նվաճումների համար: Ծնողները պետք է նախատեսեն մասնակցել ELD Ծրագրի տեղեկատվական ժողովին աշնանը՝ լսելու հատուկ տեղեկություններ ծրագրի որակավորման և չափանիշների վերաբերյալ:

ՇՆՈՐՀԱԼԻՆԵՐԻ ԵՎ ՏԱՂԱՆԴԱՎՈՐՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ (GATE) ԾՐԱԳԻՐ

Gate-ը հարստացման ծրագիր է, որն առաջարկվում է աշակերտներին՝ չորրորդ դասարանից սկսած, ովքեր բավարարել են Կրթաշրջանի չափանիշները և առաջարկվել են իրենց դասարանի ուսուցչի, ինչպես նաև դպրոցի հոգեբանի կողմից: Ջոն Մարշալ դպրոցում այս ընտրված աշակերտների համար այլընտրանքային ուսումնառության գործունեություններ են իրականացվում սովորական դասարանում և դասերից դուրս ժամերին:

ԳՈՐԾԻՔԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

4-5-րդ դասարանների աշակերտների համար շաբաթը մեկ անգամ գործում է կամընտիր գործիքային երաժշտության ծրագիր: Կրթաշրջանն ունի սահմանափակ թվով գործիքներ, որոնք կարող են վարձակալվել: Աշակերտները կարող են նաև վարձել տեղական երաժշտական խանութներից:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ոչ թանկ, աշակերտների կամընտիր ապահովագրություն է առկա բոլոր աշակերտների համար: Ծնողներին խրախուսվում է ուսումնասիրել դիմումը, երբ այն տուն է ուղարկվում ուսումնական տարվա սկզբին կամ դպրոցում գրանցվելուց հետո:

LCAP:

Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջան – LCAP-ի նպատակներ

1. Առավելագույնի հասցնել աշակերտների ձեռքբերումները
2. Ստեղծել ուսման մշակույթ
3. Մեծացնել ներգրավվածությունը
4. Պահպանել Կրթաշրջանի վճարունակությունը և ֆինանսական պատասխանատվությունը

ԳՐԱԴԱՐԱՆ

Ջոն Մարշալ տարրական դպրոցի յուրաքանչյուր դասարանի հնարավորություն է տրվում ամեն շաբաթ այցելել դպրոցի գրադարան:
Մանկապարտեզի (K) դասարաններն այցելում են գրադարան ամեն շաբաթ՝ պատմվածքի ժամի համար: Աշակերտները կարող են շաբաթական երկու գիրք դուրս գրել, եթե վերադարձրել են նախորդ շաբաթվա գիրք(գրքեր)ը:

Ցանկացած ԿՈՐԱԾ կամ ՎՆԱՍՎԱԾ գրքի համար պետք է վճարել: Աշակերտին կտրամադրվի վճարման անդորրագիր, և եթե գիրքը հետագայում գտնվի, աշակերտին/ծնողին կվերադարձվի գումարը: Մենք խրախուսում ենք աշակերտներին և ծնողներին այցելել Գլենդելի հանրային գրադարան, որը գտնվում է E. Harvard Street 222 հասցեում:
Յուրաքանչյուր աշակերտ Գլենդելի հանրային գրադարանի քարտ ունի:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Վկայագրված ֆիզիկական դաստիարակության (PE) ուսուցիչը շաբաթական 120 րոպե տևողությամբ հերթական, ավասարակշռված ծրագիր է տրամադրում 4-5-րդ դասարանների բոլոր աշակերտներին: TK-3-րդ դասարաններում դասարանի ուսուցիչն է պատասխանատու է ֆիզ. դաստիարակության ծրագրի համար՝ ամեն օր միջինը 20 րոպե՝ ամբողջ ուսումնական տարվա ընթացքում:

Մշակվել է առանձնահատուկ ուսումնական ծրագիր, և բոլոր ուսուցիչները վերապատրաստվել են դրա իրականացման համար: Բոլոր բացօթյա միջոցառումները, ներառյալ ֆիզիկական դաստիարակության դասերը, կրճատվում և տեղափոխվում են փակ տարածքներ՝ ելնելով անբարենպաստ եղանակից կամ օդի որակի վերահսկման մարմինների կողմից օդի մաքրության մասին ահազանգերից: Աշակերտները պետք է հագնեն փակ քթով սպորտային կոշիկներ և ֆիզիկական գործունեությանը համապատասխան հագուստ:

ԴՊՐՈՑԻ ՀՈԳԵԲԱՆ

Մեր բախտը բերել է, որ դպրոցում ունենք լրիվ դրույքով աշխատող դպրոցական հոգեբան, ով կարող է տրամադրել կրթական խորհրդատվություն և իրականացնել աշակերտների հոգեբանական-ուսումնական թեստավորում ու գնահատում: Աշակերտներն ուղարկվում են թեստավորման Աշակերտների հաջողության թիմի (SST) կողմից, եթե թիմը կասկածում է, որ երեխան հնարավոր է Հատուկ կրթության ծառայությունների կարիք ունի:

ՀԱՏՈՒԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Հատուկ կարիքներ ունեցող աշակերտները կարող են սպասարկվել տարբեր ձևերով: Երեխայի տեղավորումը կախված է հատուկ վերապատրաստված անձնակազմի կողմից լայնածավալ թեստավորման, գնահատման և ուսումնասիրման արդյունքներից, որին հաջորդում է Անհատականացված ուսումնական ծրագրի (IEP) թիմի ժողովը:

ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՈՒՍՈՒՑՈՒՄ (SAI Core)

Հիմնական առարկաների SAI ծրագիրը նախատեսված է այն աշակերտների համար, ովքեր ունեն ուսման որոշակի անկարողություններ, որոնք կարող են ազդել մեկ կամ մի քանի ուսումնական ոլորտներում նրանց նվաճումների վրա, և կարող են ուսումնական օրվա կեսից քիչ միջամտություն պահանջել:

ԽՈՍՔԻ ԵՎ ԼԵԶՎԻ ԾՐԱԳԻՐ

Խոսքի և լեզվի ծրագիրը նախատեսված է այն աշակերտների համար, ովքեր ուշացում կամ խանգարում են ցուցաբերում հետևյալ ոլորտներից մեկում կամ մի քանիսում՝ հոդակապություն, լեզու, ձայն կամ սահունություն:

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՈՒՍՈՒՑՈՒՄ ԻՆՔՆԱՊԱՐՓԱԿ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ (SAI)

Մասնագիտացված ուսուցման դասընթացները տրամադրում են մասնագիտացված ամբողջօրյա ուսուցում այն աշակերտներին, ովքեր ուսման որոշակի անկարողություն ունեն, որը կարող է ազդել նրանց ձեռքբերումների վրա մեկ կամ մի քանի ուսումնական ոլորտներում, և որոնք պահանջում են միջամտություն՝ ուսումնական օրվա կեսից ավելին:

ԱՇԱԿԵՐՏԻ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԹԻՄ (SST)

Ամեն անգամ, երբ աճում է աշակերտի ուսումնական առաջադիմության հետ կապված մտահոգությունը, անհատների թիմը, ներառյալ ուսուցիչը, ծնողը, տնօրենը, դպրոցի հոգեբանը, ռեսուրսների մասնագետը և/կամ մասնագետ ուսուցիչը, կարող են ժողով անել: Քննարկվում է աշակերտի կրթական պատմությունը, ներկայացվում են աշխատանքների նմուշները և ծրագրվում են գործողություններ՝ դասարանում ավելի մեծ հաջողության հասնելու համար:

ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԹԻՄ (ILT)

Ղեկավար թիմը կազմված է տնօրենից, մասնագետ ուսուցչից և ուսուցիչ ներկայացուցչից յուրաքանչյուր դասարանային մակարդակի համար: Ղեկավար թիմը դպրոցի որոշումներ կայացնող խումբն է, որը ծառայում է դպրոցական խնդիրների լուծմանը՝ բյուջե, կարգապահություն, ուսումնական ծրագիր և այլ դպրոցական ծրագրեր/գործունեություններ: Ժողովներն անցկացվում են ամեն ամիս:

TITLE I

Դաշնային ֆինանսավորմամբ այս ծրագիրն օգնություն է տրամադրում այն աշակերտներին, ովքեր չեն բավարարում դասարանային մակարդակի չափանիշներին պատշաճ հաջողությամբ՝ ընթերցանության/լեզվաարվեստի և մաթեմատիկայի բնագավառներում: Ելնելով Կրթաշրջանի չափանիշներից՝ այդ աշակերտների և/կամ նրանց ծնողների համար ծառայությունները կարող են ներառել՝ օգնող անձնակազմ, դասարանի օգնականներ, լրացուցիչ ուսումնական նյութեր, ուսման աջակցության ծառայություններ, ակումբներ, դասապատրաստում, ծնողների կրթություն և այլն:

ՎԱԳՐԻԿՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ

1-5-րդ դասարանների աշակերտներին, ովքեր անգլերեն լեզվարվեստի (ELA) և/կամ մաթեմատիկայի տարրական և տարրականից ցածր մակարդակում են, ստանում են տարբերակված ուսուցում կանոնավոր դասերի ընթացքում հավաստագրված ուսուցիչների կողմից: Անհատական աջակցություն է տրամադրվում աշակերտներին՝ աջակցելու նրանց առաջընթացին՝ ELA և/կամ մաթեմատիկայի դասարանային մակարդակի չափանիշներին համապատասխանելու նպատակով: Ակադեմիայի ուսուցիչները համագործակցում են 1-5-րդ դասարանների ուսուցիչների հետ՝ ապահովելու աշակերտների պատշաճ, կարողությունների վրա հիմնված ուսուցումը:

ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ԴԱՍԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՕՐԸ

Դասարանների ցուցակները փակցվում են դասերի առաջին օրը: Աշակերտներն իրենց դասարանի հետ շարք են կանգնում իրենց համարի մոտ և ուսուցչի ուղեկցությամբ գնում են իրենց դասասենյակ: Միայն TK-ի և K-ի ծնողները կարող են կարճ ժամանակով դասարան մտնել իրենց երեխայի հետ: 1-5-րդ դասարանների աշակերտների ծնողները պետք է դուրս գան խաղահրապարակից, երբ զանգը հնչի ժ. 8:10-ին:

ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱՄՈՒՏԻ ԵՐԵԿՈ – Բոլոր դասարաններն օրը կսկսեն դահլիճում զեկույց լսելով

Սա մի միջոցառում է դպրոցի առաջին ամսվա ընթացքում, երբ ծնողները/խնամակալները հնարավորություն ունեն հանդիպելու իրենց երեխայի ուսուցչին և ծանոթանալու դասարանի գալիք տարվա ծրագրին: Երեկոն նախատեսված է միայն ծնողների/խնամակալների համար: Դպրոցի վերամուտի երեկոն սկսվում է նշանակված **ճիշտ** ժամին **դահլիճում**: Տնօրենը և մասնագետ ուսուցիչը տեղեկատվություն կներկայացնեն դպրոցի և Կրթաշրջանի քաղաքականության վերաբերյալ: Ուսուցիչները դահլիճում կդիմավորեն ծնողներին և նրանց կուղեկցեն իրենց դասարան՝ մնացած ժամանակի ընթացքում դասարանային մակարդակի առանձնահատուկ տեղեկություններ տալու համար: Խնդրում ենք զերծ մնալ ձեր երեխայի մասին կոնկրետ հարցեր տալուց: Այս երեկոն նախատեսված է միայն ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ, ոչ թե ծնողների հետ համաժողովների համար:

ԼՈՒՍԱՆԿԱՐԻ ՕՐ

Բոլոր աշակերտները և անձնակազմը անհատապես կլուսանկարվեն արհեստավարժ լուսանկարչի կողմից: Համազգեստը պարտադիր է, եթե այլ բան նշված չէ:
Լուսանկարները կարելի է գնել տարբեր փաթեթներով:

Աշնանային լուսանկարներ. ամսաթվերը կուղարկվեն ընտանիքներին: Այս լուսանկարների համար պետք է համազգեստ հագնել:

Գարնանային լուսանկարներ և 5-րդ դասարանի ավարտական լուսանկարներ – Ամսաթվերը կուղարկվեն ընտանիքներին – Սա գեղեցիկ հագնվելու օր է – հատուկ միջոցառման կամ երեկույթի զգեստ:

5-րդ դասարանի համայնապատկերային նկար – Ամսաթվերը կփոխանցվեն ընտանիքներին. 5-րդ դասարանի աշակերտները պետք է իրենց համազգեստով լինեն՝ կարմիր վերնաշապիկով:

ԷՔՍԿՈՒՐՍԻԱՆԵՐ

Յուրաքանչյուր ուսուցիչ խրախուսվում է ուսումնական տարվա ընթացքում կազմակերպել առնվազն մեկ ճամփորդություն, որն աջակցում է ուսումնական ծրագրին: Պահանջվում է ծնողի թույլտվությունը բոլոր էքսկուրսիաների համար:

Խնդրում ենք հաշվի առնել, որ ելնելով Կրթաշրջանի և մեր աշակերտների այցելած վայրերի քաղաքականությունից, միայն որոշակի թվով ծնողներ կարող են էքսկուրսիաների ժամանակ ուղեկցել դասարանին: Եթե դուք ճամփորդության պաշտոնական, ավտոբուսի ուղեկցողը չեք, ապա <u>չեք</u> կարող ավտոբուսին հետևել ձեր սեփական մեքենայով և միանալ խմբին հանդիպման վայրում: Ակնկալվում է, որ ծնողները կհետևեն այս քաղաքականությանը: Խնդրում ենք մեր աշակերտներին, ուսուցիչներին և ընդունող կողմին չդնել դժվար կացության մեջ և չշեղել ուշադրությունը՝ ինքնուրույնաբար ներկայանալով մեր ուսուցիչների կազմակերպած էքսկուրսիային՝ նշանակված վայրում:

ԿԱՐՄԻՐ ԺԱՊԱՎԵՆԻ ԵՎ ԴԵՂԻՆ ԺԱՊԱՎԵՆԻ ՇԱԲԱԹ

Կարմիր ժապավենի շաբաթը 1986 թվականից ի վեր ամենամյա միջոցառում է Միացյալ Նահանգների դպրոցներում: Կարմիր ժապավենի միջոցառումները կազմակերպվում են՝ ներկայացնելու համար միասնական, դրական և տեսանելի միտում դեպի անվտանգ և թմրանյութերից զերծ Ամերիկա:

Դեղին ժապավենի շաբաթը ամենամյա միջոցառում է Միացյալ Նահանգների դպրոցներում, որն ընդգծում է ռազմավարություններն ու գործունեությունները, որոնք նպաստում են հասակակիցների հետ դրական հարաբերություններին և կոնֆլիկտների լուծմանը:

ԲԱՑ ԴՌՆԵՐԻ ՕՐ. Կարճ դպրոցական օր

Սա առանձնահատուկ երեկո է, երբ աշակերտները կարող են ուղեկցել իրենց ծնողներին և ընտանիքներին՝ այցելելու իրենց դասարանները: Այն երեխաներին հնարավորություն է տալիս բացատրելու, թե ինչ են սովորել և ցույց տալու իրենց դպրոցական աշխատանքների նմուշները: <u>Խնդրում ենք նկատի ունենալ, որ սա ձեր երեխայի ուսուցչի հետ խորհրդակցելու ժամանակը չէ:</u> Այն հնարավորություն է ընձեռում ընտանիքի բոլոր անդամներին այցելելու և դիտելու այն բոլոր հրաշալի աշխատանքները, որոնք աշակերտները կատարել են ամբողջ տարվա ընթացքում: Բոլորին հրավիրում ենք ներկա գտնվելու այս միջոցառմանը: Մանրամասների համար խնդրում ենք ստուգել մեր օրացույցը դպրոցի կայքում:

ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Մեր Հայրենասիրական ժողովներում արտասանում ենք մեր երկրի դրոշին հավատարմության ուխտը (Pledge of Allegiance) և երգում հայրենասիրական երգ: Ծնողները կարող են մասնակցել այս արարողություններին:

ԱՄՍՎԱ ԱՇԱԿԵՐՏ/ԱՄՍՎԱ ԱՌԱՋՆՈՐԴ ՊԱՐԳԵՎՆԵՐ

Ամենամյա Spirit Awards ժողովներում աշակերտները պարգևատրվում են որպես ամսվա լավագուն աշակերտ և ամսվա առաջնորդ: Յուրաքանչյուր ուսուցիչ ընտրում է աշակերտ՝ յուրաքանչյուր կատեգորիան ներկայացնելու համար: Աշակերտները գնահատանքի են արժանանում վկայականներ ստանալով կամ այլ ձևերով: Ողջունվում է ծնողների մասնակցությունը մեր ամենամյա պարգևատրման ժողովներին:

ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՕՐ

Համաձայն նահանգային ուղեցույցների, յուրաքանչյուր դպրոցի թույլատրվում է մինչև երեք օր օգտագործել անձնակազմի վերապատրաստման համար: Այդ օրերին աշակերտների համար դասեր չեն լինի, որպեսզի ուսուցչական կազմը կարողանա վերապատրաստվել: Խնդրում ենք ստուգել օրացույցը կայքում՝ մանրամասների համար:

ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՆ

Իրական արտակարգ իրավիճակի դեպքում ծնողներին խնդրում ենք հետևել այս ընթացակարգերին.

Արտակարգ իրավիճակների մասին տեղեկություններ ստանալու համար միացեք KIEV, AM 870 ռադիոկայանին, 15-րդ հեռուստաալիքին կամ 6-րդ ալիքին:

ՄԻ ԶԱՆԳԱՀԱՐԵՔ դպրոցի գրասենյակ:

Համոզված եղեք, որ դպրոցի անձնակազմը կմնա ձեր երեխայի հետ այնքան ժամանակ, մինչև ինչ-որ մեկը գա նրան վերցնելու:

Ջոն Մարշալ դպրոցի Արտակարգ իրավիճակների պատրաստության ծրագրի նպատակն է պաշտպանել աշակերտներին և աշխատակիցներին, եթե տարածաշրջանում լուրջ արտակարգ իրավիճակ լինի: Ծրագիրը նշում է դպրոցի արտակարգ իրավիճակների թիմերի անդամներին և նախանշում պարտականությունները:Ծրագիրը թարմացվում և վերանայվում է ամեն տարի: Համաձայն Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանի արտակարգ իրավիճակներում աշակերտներին արձակելու քաղաքականության՝ ծնողները կարող են ակնկալել, որ Ջ. Մարշալ դպրոցում գործելու են հետևյալ ընթացակարգերը.

ԱՂԵՏԻՆ/ԵՐԿՐԱՇԱՐԺԻՆ ՀԵՏԵՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երբ ապահով լինի, ուսուցիչները և աշակերտները դուրս կգան շենքից և ուղիղ կգնան խաղահրապարակում իրենց դասարանի համար նախատեսված շարվելու հատվածը:

Ուսուցիչները կստուգեն ներկայությունը և կհայտնեն անհայտ կորածների կամ վիրավորների անունները դպրոցի շտապ օգնության կենտրոն:

Դպրոցի շտապ օգնության թիմը կզեկուցի իրենց կայաններին:
Կրթաշրջանի աշխատակիցները կմնան աշակերտների հետ և կհսկեն՝ մինչև նրանց վերցնեն:

ԱՐԳԵԼԱՓԱԿՈՒՄ

Դպրոցի արգելափակման իրավիճակում բոլոր դռներն ու դարպասները կողպված կլինեն:
Բոլոր աշակերտները կպատսպարվեն ամենամոտ դասարանում:

Ոչ մի աշակերտ չի ուղարկվի տուն, մինչև չինչի “all clear”

Մենք իրականացնում ենք անվտանգության տարբեր վարժանքներ.
Երկրաշարժ, հրդեհ և արգելափակում՝ ամբողջ տարվա ընթացքում ոաշակերտներին նախապատրաստելու նպատակով:

<u>ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ ՋՈՆ ՄԱՐՇԱԼ ԴՊՐՈՑԻ ԲՈԼՈՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ.</u>

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ՀԱՆԳՍՏՈՒԹՅՈՒՆ ՊԱՀՊԱՆԵԼ

Ճարք կանգնեք **<u>դպրոցի դիմացի</u>** դարպասների մոտ (Request Gate) (*ուղղով ելողների դարպաս*):

Տրամադրեք ձեր ինքնությունը հաստատող լուսանկարով փաստաթուղթ և ներկայացրեք ձեր երեխային մեր անձնակազմին: Խնդրում ենք իմանալ ձեր երեխայի ուսուցչի անունը:

Մենք կհետևենք աշակերտներին ձեզ հանձնելու մեր գործընթացին:

ԿԱՐԵՎՈՐ Է. Խնդրում ենք համոզվել, որ թարմացրել եք աշակերտի տեղեկատվական համակարգի տվյալներն այն անձանց համար, ում թույլատրվում է վերցնել աշակերտին: Մենք աշակերտներին չենք հանձնի այն անձանց, ովքեր նշված չեն աշակերտի տեղեկությունների համակարգում:



ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼ.

Ոչ մի ծնողի չի թույլատրվի մտնել դպրոցի տարածք, և ոչ մի երեխայի չի թույլատրվի վազել դեպի ցանկապատը, եթե ծնողը կամ հարազատը կանչի:
Եթե ձեր անունը չկա երեխայի Արտակարգ իրավիճակների Կապույտ քարտի վրա, դուք չեք կարող վերցնել նրան:

Blue Emergency ID Tag *(Կապույտ քարտ)*



EMERGENCY ID TAG
John Marshall Elementary School
Teacher: _____ Room: _____
Student Name: _____
Hm Address: _____
Hm Phone: _____
Father Name: _____
Father Cell: _____
Father Work: _____
Mother Name: _____
Mother Cell: _____
Mother Work: _____
Out of State Contact: _____
Phone #: _____
I AUTHORIZE MY CHILD TO BE RELEASED TO:
*PERSONS LISTED ON THE REVERSE __Y __N
*PERSONS HE/SHE RECOGNIZES __Y __N
Parent/Guardian Signature Date

EMERGENCY ID TAG
John Marshall Elementary School
Teacher: _____ Room: _____
Student Name: _____
Hm Address: _____
Hm Phone: _____
Father Name: _____
Father Cell: _____
Father Work: _____
Mother Name: _____
Mother Cell: _____
Mother Work: _____
Out of State Contact: _____
Phone #: _____
I AUTHORIZE MY CHILD TO BE RELEASED TO:
*PERSONS LISTED ON THE REVERSE __Y __N
*PERSONS HE/SHE RECOGNIZES __Y __N
Parent/Guardian Signature Date

MY CHILD MAY BE RELEASED TO:
Name: _____
Phone: _____
Address: _____
Name: _____
Phone: _____
Address: _____
Name: _____
Phone: _____
Address: _____
DO NOT RELEASE MY CHILD TO:
Name: _____
Reason: _____
SCHOOL USE ONLY
Child was released to
Name: _____
Signature: _____
Date: _____ Time: _____
Destination: _____

MY CHILD MAY BE RELEASED TO:
Name: _____
Phone: _____
Address: _____
Name: _____
Phone: _____
Address: _____
Name: _____
Phone: _____
Address: _____
DO NOT RELEASE MY CHILD TO:
Name: _____
Reason: _____
SCHOOL USE ONLY
Child was released to
Name: _____
Signature: _____
Date: _____ Time: _____
Destination: _____

ՀԱՃԱԽՈՒՄՆԵՐԸ ԿԱՐԵՎՈՐ ԵՆ

Կալիֆոռնիայում վատ հաճախումները կամ վարքը պատճառ են հանդիսանում, որ մեծ թվով աշակերտներ թողնեն դպրոցը: Ծնողները պետք է հասկանան իրենց դերը կանոնավոր կերպով դպրոց հաճախելու օրինաչափություն հաստատելու գործում: Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանը ողջունում է ազատ և արդյունավետ հաղորդակցությունը, ինչպեսին են՝ ղեկավարների, ուսուցիչների, խորհրդատուների հետ ժողովները ու Parent Connect-ի միջոցով կապը:

Աշակերտը դպրոցից քրոնիկ բացակայող է համարվում, երբ նա ամիսը երկու կամ ավելի օր բացակայում է: Կարող է դա շատ չթվալ, բայց դրանք, գումարվելով, արագորեն ավելանում են: Ուսումնական տարվա ընթացքում դա կարող է բացակայության մի ամբողջ ամիս դառնալ:

Երբեմն երեխաները հիվանդանում են: Այնուամենայնիվ, յուրաքանչյուր ամիս նույնիսկ երկու օրով բացակայությունը կարող է հետընթացի տանել ձեր երեխայի կրթությունը. մանկապարտեզի և առաջին դասարանի աշակերտները 3-րդ դասարանի վերջում ավելի քիչ է հավանական, որ կարդալ սովորած կլինեն: Մինչև 6-րդ դասարան հասնելը քրոնիկ բացակայություններն աշակերտին հանգեցնում են դպրոցը թողնելուն: Մինչև 9-րդ դասարան հասնելը լավ հաճախումները ենթադրում են դպրոցն ավարտելու ավելի մեծ հավանականություն, քան թե քննության միավորները: Պարզ է, որ դպրոց հաճախելը կարևո՛ր է:

Աշակերտը, դասը սկսվելիս, պետք է իր նստարանին նստած լինի և պատրաստ՝ հանձնարարություն կատարելու: Առավոտյան ժ. 8:10 դարպասները փակվում են: Դասերը սկսվում են ժ. 8:15-ին:

Թեև կան բազմաթիվ գործոններ, որոնք նպաստում են դպրոցում հաջողության հասնելուն, դասերին կանոնավոր հաճախումները և դպրոցական պատշաճ վարքագիծն անհրաժեշտ են, որ բոլոր աշակերտները հաջողակ լինեն: Մենք կցանկանայինք օգնել ձեր ընտանիքին ցանկացած խնդրի ծագման պարագայում, որի պատճառով ձեր երեխան կարող է բացակայել դասերից: Միասին մենք կարող ենք գտնել ամենաճիշտ լուծումը յուրաքանչյուր աշակերտի և ընտանիքի համար: Ձեր երեխայի կրթությունը կարևո՛ր է:

ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՔ ՕԳՆԵԼ ՁԵՐ ԵՐԵԽԱՅԻՆ ԴՊՐՈՑՈՒՄ ԼԻՆԵԼ ԱՄԵՆ ՕՐ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԻՆ

Սահմանեք քնելու կանոնավոր ժամ և առավոտյան ռեժիմ:
Նախորդ երեկոյան պատրաստվեք հաջորդ օրվա դասերին՝ ավարտելով տնային աշխատանքը և բավարար քնելով գիշերը:
Պարզեք, թե որ օրն են դասերը սկսվում և վստահացեք, որ ձեր երեխան ունի անհրաժեշտ պատվաստումները:
Թույլ մի տվեք, որ ձեր աշակերտը մնա տանը, եթե նա իսկապես հիվանդ չէ: Հիշեք, որ ստամոքսի ցավից կամ գլխացավից բողոքելը կարող է հուզմունքի նշան լինել և ոչ թե՝ տանը մնալու պատճառ:
Ծրագրեք բժշկի և ատամնաբույժի ժամադրությունները ձեր երեխայի դասերից հետո: Մի ծրագրեք երկարատև ուղևորություններ, երբ դասեր կան:
Մշակեք երկրորդ ծրագիր դպրոց գալու համար, եթե ինչ-որ բան պատահի: Ձանգահարեք ընտանիքի անդամին, հարևանին կամ մեկ այլ ծնողի:
Հետևեք ձեր աշակերտի հաճախումներին: Ամիսը 2 կամ ավելի օր բացակայելը կարող է ձեր աշակերտին ետ մնալու վտանգի տակ դնել:
Խոսեք ձեր աշակերտի հետ հաճախումների կարևորության մասին:
Խրախուսեք ձեր երեխային լինել Tiger թիմի անդամ. դպրոցում լինել ժամանակին և ամեն օր:

ԾՆՈՂԻ ՁԵՌՆԱՐԿ
ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Խնդրում ենք լրացնել, կարդալ և ստորագրել ձևաթղթերը այս թերթի ամեն կողմում:
Վերադարձրեք էջը ձեր երեխայի ուսուցչին ոչ ուշ, քան <u>2022թ. օգոստոսի 26-ը, ուրբաթ:</u>

Աշակերտ (անուն,ազգ.)_____Դասարան_____ Ուսուցիչ_____

Ես կարդացել և քննարկել եմ Ջոն Մարշալ տարրական դպրոցի ձեռնարկը երեխայիս հետ: Ես համաձայն եմ հետևել բոլոր կանոններին, ինչպես նշված է, համոզվելու համար, որ իմ երեխան պահպանում է բոլոր կանոնները և աջակցել իմ երեխայի ուսմանը տանը:

_____ _____

Ծնողի ստորագրություն **Ամսաթիվ**

Ծնողիս հետ կարդացել և քննարկել եմ Ջոն Մարշալ տարրական դպրոցի ձեռնարկը: Ես համաձայն եմ հետևել բոլոր կանոններին, ինչպես նշված է, համոզվելու համար, որ ես հետևում եմ բոլոր կանոններին և քաղաքականությանը և աջակցել իմ ուսմանը տանը:

_____ _____

Աշակերտի ստորագրություն **Ամսաթիվ**

ԴՊՐՈՑ/ԾՆՈՂ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 2022-2023

Աշակերտ(անուն,ազգ.) _____ **Ուսուցիչ** _____

ՈՒՍՈՒՑԻՉԸ ՊԱՐՏԱՎՈՐՎՈՒՄ Է.

Ես հասկանում եմ դպրոցական փորձառության կարևորությունը յուրաքանչյուր աշակերտի համար և իմ դերը՝ որպես ուսուցիչ և օրինակ: Հետևաբար, ես համաձայն եմ ստանձնել հետևյալ պարտականությունները.

- Ուսուցանել նահանգի և կրթաշրջանի դասարանային մակարդակի չափանիշները
- Տեխնոլոգիա ներդնել ուս. ծրագրում
- Ձգտել բավարարել յուրաքանչյուր երեխայի անհատական կարիքները
- Արձագանքել ժամանակին
- Խրախուսել ծնողների ակտիվ ներգրավվածությունը
- Ծնողների հետ հաղորդակցվել աշակերտի առաջադիմության վերաբերյալ
- Կիսել աշակերտների/ծնողների հետ դպրոցի/դասարանի ակնկալիքները
- Աշակերտների հետ շփվել դրական մոտեցմամբ և հարգանքով
- Աջակցել դպրոցի/կրթաշրջանի դրական վարքագծի միջամտությանը և աջակցությանը և հաճախումների քաղաքականությանը

Ուսուցչի ստորագրություն _____ **Ամսաթիվ** _____

ԱՇԱԿԵՐՏԸ ՊԱՐՏԱՎՈՐՎՈՒՄ Է.

Ես գիտակցում եմ, որ իմ կրթությունը կարևոր է: Ես գիտեմ, որ ես եմ պատասխանատու իմ հաջողության համար: Հետևաբար, ես համաձայն եմ ստանձնել հետևյալ պարտականությունները.

- Ամեն օր ձգտել անելու առավելագույնը
- Օգնություն խնդրել անհրաժեշտության դեպքում
- Դպրոց գալ ամեն օր, ժամանակին, պատրաստ սովորելու՝ կրելով դպրոցական համազգեստ
- Կարդալ և գրել ամեն օր՝ սովորելու և հաճույք ստանալու համար
- Հարգել դպրոցի գույքը և ուրիշների ունեցվածքը
- Փոխարինել կամ վճարել իմ վնասած/կորցրած դպրոցի գույքի կամ նյութերի համար
- Բոլոր աշակերտներին և չափահասներին վերաբերվել բարությամբ և հարգանքով
- Իմ հինգշաբթի օրվա թղթապանակը տանել տուն ծնողներիս համար և մյուս օրը վերադարձնել դպրոց
- Պատասխանատվություն կրել իմ վարքի համար և հետևել դպրոցի Դրական վարքի միջամտություններին և աջակցությանը
- Պահպանել հարգալից հաղորդակցություն դպրոցի անձնակազմի հետ
- Հեռակա ուսման առաջադրանքները կատարել ժամանակին և առանց օգնության

Աշակերտի ստորագրություն _____ **Ամսաթիվ** _____

ԾՆՈՂԸ/ԽՆԱՄԱԿԱԼԸ ՊԱՐՏԱՎՈՐՎՈՒՄ Է.

Ես հասկանում եմ, որ իմ մասնակցությունը երեխայիս կրթությանը կօգնի նրա ձեռքբերումներին և վերաբերմունքին: Ուստի շարունակելու եմ իրականացնել հետևյալ պարտականությունները.

- Հետևել, որ երեխաս ամեն օր ժամանակին դպրոց գա՝ պատրաստ սովորելու
- Հետևել, որ երեխաս բավականաչափ քնի և լավ սնվի
- Քաջալերել երեխայիս ամեն օր ներդնելու առավելագույն ջանքերը
- Կարդալու և աշխատելու համար երեխայիս տրամադրել հանգիստ վայր/ժամանակ
- Վերանայել դպրոցի ուղարկած փաստաթղթերը և վերադարձնել պահանջվածը
- Մասնակցել Վերամուտի երեկոյին, Ժողովներին, Բաց դռների օրվան և դպրոցական միջոցառումներին
- Սահմանափակել հեռուստացույցը, համակարգիչը, հեռախոսը և տեսախաղերը
- Աջակցել դպրոցի/կրթաշրջանի Դրական վարքագծի միջամտություններին և աջակցությանը, ինչպես նաև հաճախումների քաղաքականությանը
- Հավաստիանալ, որ երեխաս դպրոցական համազգեստ է կրում
- Հարցերի կամ մտահոգությունների դեպքում կապվել ուսուցչի հետ
- Փոխարինել կամ վճարել աշակերտի վնասած/կորցրած դպրոցի գույքի կամ նյութերի համար
- Կարդալ, դատարկել և վերադարձնել Հինգշաբթի օրվա թղթապանակը
- Պահպանել դրական և հարգալից հաղորդակցություն դպրոցի անձնակազմի հետ
- Աջակցել աշակերտների հեռավար ուսուցմանը՝ պահպանելով դպրոցի և Կրթաշրջանի Համակարգչային անվտանգության ուղեցույցները

Ծնողի ստորագրություն_____ **Ամսաթիվ** _____

Վերանայվել է 4/12/2022